

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԴՐԱԿԱՆ ԿԸ ԳՆԱՀԱՏԷ ԶԵՆԻԱ ԵՒ ՍԼՈՎԱԿԻԱ ԻՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Նախագահ Լահուտ եւ Առաջին տիկինը Գախագահ Հաւելի հետ

Նախագահ Գոր. Էմիլ Լահուտ երէկ եզրափակեց իր պաշտօնական այցելութիւնը, եւ կէսօրէ ետք Փրակայէն վերադարձաւ Պէյրութ:

Նախագահ Լահուտ գոհունակութիւն յայտնեց այցելութեան արդիւնքներուն համար՝ հաստատելով, որ ինքն ու իր չեխ պաշտօնակիցը համակարծիք էին արձարձուած հարցերուն շուրջ, մասնաւոր չեխ կը վերաբերի Սիլիւ Արեւելքի տագնապին ու խաղաղութեան արաբական նախաձեռնութեան:

Գրակայէն մեկնելու պահուն նախագահ Լահուտ իրեն ընկերակցող լրատուական պատուիրակութեան անդամներուն յայտնեց, որ նախագահ Հաւելի հետ իր խորհրդակցութիւնները շինիչ եւ օգտակար էին:

«Համակարծիք ենք երկու բարեկամ պետութիւններու աւանդական յարաբերութիւնները ամրապնդելու անհրաժեշտութեան շուրջ եւ համաձայնեցանք՝ թափ տալու միացեալ յանձնարարութեան:

Իրեն գործունէութեան, որպէսզի անիկա հետապնդէ երկու երկիրներուն միջեւ ստորագրուած առեւտուրին համաձայնագիրը», նշեց ան:

«Նախագահ Հաւելի ներկայացուցի Պէյրութի արաբական վեհաժողովին քննարկումներուն տիրած միջոցառումը եւ տրուած պատմական որոշումները, խաղաղութեան արաբական նախաձեռնութիւնը: Ընդգծեցի, որ այդ նախաձեռնութիւնը հիմնուած է ՄԱԿի որոշումներուն գործադրութեան պահանջին վրայ, իրեն միջոց չըջանին ըրող ժողովուրդներուն ապահովութիւն եւ կայունութեան շնորհիւ արդար, վերջնական եւ ամբողջական խաղաղութեան հաստատումին, ինչպէս նաեւ պարզեցումներու գաղթականներու տունդարձին եւ անկախ պետականութեան կերտումին», ըստ նախագահ Լահուտի:

Նախագահը նշեց. «Ուրախութեամբ հաստատեցի, որ Չեխի կը բաժնէ Լիբանանի կեցուածքն ու կարծիքը, թէ ուժը լուծում չի բերեր եւ անհրաժեշտ է վերագոծնալ քանակցութիւններու սեղանը»:

Մատրիտի սկզբունքներու եւ ՄԱԿի որոշումներուն հիմամբ լուծելու շրջանային տագնապը»:

Լահուտ նաեւ հաստատեց, որ Չեխի կը բաժնէ Միջին Արեւելքի տագնապին լուծման գծով Լիբանանի կեցուածքը:

ՇԱՍՄՈՒՏ

Վերադարձի ճամբուն վրայ, օդանավով մէջ լրագրողներու հետ խօսակցութեան ընթացքին արաբին գործոց նախարար Մահմուտ Համմուտ նկատել տուաւ, որ նախագահ Լահուտ Սլովակայի պահու մը, երբ Միջին Արեւելքի մէջ արաբական դատերուն հետ առնչուող լուրը իրադարձութիւններ կան, եւ անհրաժեշտ է, որ Արաբական Լիգայի նախագահութիւնը ստանձնած Լիբանան ներկայացնէ այդ դատերը:

Շար.՝ էջ 3

ՀՆԴԿԱՍՍԱՆ – ՓԱՔԻՍՍԱՆ ՏԱԳՆԱՊԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Իրանի Ազգային Ապահովութեան Գերագոյն խորհուրդի քարտուղար Հասան Ռուհանի երէկ Փաքիստան ժամանեց՝ ապահովական հարցերու շուրջ խորհրդակցութիւններ ունենալու համար:

Ռուհանի առաջին հերթին նախագահ Փերվիզ Մուշարրաֆի հետ քննարկեց շրջանային ապահովութեան հարցեր: Խորհրդակցութեան նիւթ դարձաւ նաեւ «նշխատանք – Փաքիստան տագնապը»:

Լաւատեղեակ աղբիւր մը հաղորդեց, որ իրանցի պաշտօնատարը փաքիստանցի պատասխանատուներու հետ նաեւ արծարծած է Աֆղանիստանի վերաբերող հարցեր:

(ԻՐՆԱ)

«ՄԵՆԵ ԹՈՒՐԲԻԱՅԵՆ ԸԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ԻՔՐԵԻ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ ՉԵՆԵ ՊԱՇԱՏԵՐ»

Կ'ԸՍԵ Վ. ՕՍԿԱՆԵԱՆ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան Սեյ ժողովան Տնտեսական Համագործակցութեան վեհաժողովին մասնակցելու համար Պոլիս այցելութեան ընթացքին հարցազրոյց մը տուած է թրքական անկախ տաճ «Թրրքիշ Տէյլի Նիուզ» թերթին:

Նախարար Օսկանեան հարցազրոյցին ընթացքին շեշտած է, թէ «Հայաստան կ'ուզէ թուրքիոյ հետ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատել յարանց նախապայմաններ ներկայացնելու»: «Մենք չենք պահանջեր, որ թուրքիա իրեն նախապայման ճանչնայ Ցեղասպանութիւնը», ընդգծած է Օսկանեան:

Հարցազրոյցին անդրադարձող իր մեկնարանական լրատուութեան մէջ «Թրրքիշ Տէյլի Նիուզ» «պոտ պատմական» որակած է Օսկանեանի այս այցելութիւնը՝ աւելցնելով, որ անիկա «տոյր մը եղաւ հայկական կողմին համար ցոյց տալու թուրքիոյ հետ դիւանագիտական կապեր հաստատելու կամեցողութիւնը»:

«Ցեղասպանութեան հարցին մէջ «կակուղ-նայու» կողքին, այլ հետաքրքրական կէտ մըն էր, թէ Օսկանեան չակընկալեց, թէ հայկական Սփիւռքը լուրջ խոչընդոտ կը հանդիսանայ թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ յարաբերութիւններու բնականոնացման համար», նշած է «Թրրքիշ Տէյլի Նիուզ»՝ աւելցնելով, որ այս գծով Օսկանեան ըսած է, թէ որոշ մարդոց համար

դժուար կրնայ ըլլալ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման հարցը չբարձրացնելուն համար ըլլալը: Թրքական թերթը, նշելով, որ Պոլսոյ մէջ թուրքիոյ Ընկերային եւ Տնտեսական Գիտութիւններու Հիմնարկին (ԹԵՍԵՎ) մէջ նախարար Օսկանեանի այցելութիւնը արտասանած խօսքին կ'ընէ հետեւեալ մէջբերումը. «Մենք ստորագրեցինք թուրքիոյ հետ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու գծով փորձագործը: Պարզապէս կ'ուզենք, որ թուրքիա «բացերը գոցէ»: «Բոլոր մակարդակներուն վրայ, հրապարակաւ թէ դիւանագիտական միջոցներով, մենք ցոյց կ'ուր բերենք կամեցողութիւնը Անգարայի հետ կապեր հաստատելու», յայտնած է Վարդան Օսկանեան «Թրրքիշ Տէյլի Նիուզ»ին:

Նշենք, որ «Թրրքիշ Տէյլի Նիուզ» նաեւ յայտնեց, որ Պոլիս այցելած հայկական պատուիրակութեան անդամներուն մեծ մասը լաւ թրքերէն խօսած են եւ թէ «թուրքիոյ եւ Հայաստանի արտաքին գործոց նախարարներու ընդհանուր լեզուն, սեղանին շուրջ, թրքերէնն էր»:

ԹԵՂՐԱՆ Կ'ԱՇԽԱՏԻ ՄԵՂՍԱՑՆԵԼ ԿԱՍՊԻՑԻ ՄԷՋ ԼԱՐՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ

Կ'ԸՍԵ ԽԱԹԵՄԻ

Իրանի նախագահ Մոհամէտ խաթեմի շեշտեց թեհ-րանի վարած քաղաքականութիւնը՝ կասպիցի շրջանին մէջ կացութիւնը մեղմացնելու նպատակով, ինչպէս նաեւ ան գոյուցացուց շրջանին մէջ օտար ուժերու ներկայութեան:

Ազրպէյճանի հետ սահմանակից Արտեպիլ շրջան տուած իր ետօրեայ այցելութեան աւարտին խաթեմի նշեց, որ կասպիցի ծովու շրջանին ապահովութիւնը ծովը եզերող հինգ երկիրներուն հարցն է եւ անոնք ապահովութեան պէտք է հսկեն գործակցաբար:

Թեհրան – Պաքու յարաբերութիւններուն մասին խօսելով՝ խաթեմի նշած է, որ թեհրան կ'աշխատի լարուածութիւնը մեղմացնելու համար իր զբաղիւններուն հետ՝ հիմնելով փոխադարձ հասկացողութեան եւ իրարու ներքին հարցերուն միջամուխ շրջապատ սկզբունքներ վրայ:

Կասպիցի ծովու հարցերով իրանցի յատուկ բանագնաց Մեհրաբ Մաֆարի վերջերս այցելեց Պաքու, ուր քննարկումներ ունեցաւ կասպիցի կարգապահակին մասին:

Ազրպէյճանի նախագահ Հայտար Ալիեւ Մալիսիս այցելեց Իրան: Ան խաթեմիի հետ կնքեց տասը համաձայնագիրներ՝ քաղաքականութեան, տնտեսութեան, գիտութեան եւ մարզական բնագաւառներուն մէջ:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԵՐՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՍԿՍԵԼՈՒ ԸԱՍԱՐ

ԱՆԳԱՐԱ ՏԱԿԱԿԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՉԷ ԱՄԲՈՂԱՑՈՒՑԱԾ

Կ'ԸՍԵ ԴԱՆԻՈՅ ԳԻՒՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՊԵՏԸ

Դանիա, որ Յուլիս 1ին Եւրոպական Միութեան նախագահութիւնը պիտի ստանձնէ, երէկ յայտնած է, որ թուրքիա պէտք է շարունակէ քաղաքական եւ տնտեսական բարեկարգումները՝ նախ քան անդամակցութեան բանակցութեանը սկսիլը:

Թուրքիա, որ 1999ին ի վեր թեկնածու երկիր մըն է, կ'ուզէ, որ Ե. Միութիւնը Գեկտեմբերին Քոփենհակընի իր վեհաժողովին թուական մը ճշդէ անդամակցութեան գծով բանակցութեանը սկսելու համար, սակայն Դանիա կը փորձէ Անգարայի ակնկալութիւնները չքաջալերել՝ յայտնելով, որ թուրքիա սակաւին շատ բան ունի ընելիք:

Դանիոյ արտաքին գործոց նախարար Փեր Շթիկ Մեյլըր թղթակիցներու յայտնած է, որ բանակցութեանը սկսման թուական մը ունենալու համար, «Քոփենհակընի չափանիշները պէտք է իրագործուին»:

Անոնք կ'ըսեն, թէ երկիր մը պէտք է բաց, ժողովրդավար քաղաքական դրութիւն մը ունենայ եւ իրովին յարգէ մարդկային իրաւունքները նախ քան անդամակցութեան գծով բանակցութեանը սկսիլը:

Թուրքիա թեկնածու 13 երկիրներէն

միակն է, որ տակաւին բանակցութեանը չէ սկսած, անոր մարդկային իրաւանց իրաւունքները մարպիս պատճառով:

«Թուրքիա ներկայիս այդ չափանիշները չի լրացնել, հետեւաբար հիմնաւորում չկայ անոր թուական մը ճշդելու», ըսած է Մեյլըր:

Ե. Միութիւնը կ'ուզէ, որ Անգարա չնչէ մահաձիգը, տանջանքներու գծով հարցերը լուծէ, քաղաքականութեան մէջ բանակցի դերակատարութիւնը նուազեցնէ եւ թուրքիոյ քիւրտներուն մշակութային իրաւունքներ տալ:

Թուրքիոյ եւ Ե. Միութեան տագնապալի յարաբերութիւնները աւելի եւս կը բարդանան Կիպրոսի տագնապին պատճառով: Թեկնածու Կիպրոս հաւանաբար անդամակցութեան գծով բանակցութիւնները պիտի աւարտէ Գեկտեմբերին եւ 2004ին անդամակցի Միութեան:

Դանիացի դիւանագետներ կը լուսան, որ ՄԱԿ մօտ առնենք միջնորդութեամբ մը պիտի կարենայ համաձայնութիւն ապահովել թուրք եւ լոյն կիպրացիներուն միջեւ:

Ե. Միութիւնը կ'ուզէ, որ թուրք կիպրացի ղեկավար Ռուսի Տենքթաշ Կիպրոսի համար դաշնակցային լուծում մը

ընդունի, մինչ ան աւելի թոյլ կապերով «համադաշնակցութիւն» մը կ'ուզէ:

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԻՏԻ ԴԱԴՐԻՆ

Թուրք կիպրացի ղեկավար Ռուսի Տենքթաշ երէկ յայտնած է, որ Կիպրոսը վերամիացնելու նպատակով տեղի ունեցող խաղաղարար բանակցութիւնները կանգ պիտի առնեն յառաջիկայ շաբաթ, երբ ՄԱԿի յատուկ պատուիրակ Ալվարո տէ Սոթո Ապահովութեան խորհուրդին պիտի պեկուցէ անոնց արձանագրած յառաջդիմութեան մասին:

Տենքթաշ եւ Կիպրոսի նախագահ Կլաւֆոս Քլեթիտէ Յունուարին սկսած են իրարու հետ ժողովներ գումարել, սակայն շոշափելի որեւէ յառաջդիմութիւն չեն արձանագրած անոնք:

Երկու ղեկավարները Երեքշաբթի օր ժողով մը պիտի գումարեն՝ նախքան տէ Սոթոյի Նիւ Եորք մեկնումը (Չորեքշաբթի օր):

Բանակցութիւնները պիտի վերսկսուին

Շար.՝ էջ 10

ՃԱՇԱՐԱՆ ՌԻԱՏԻ ԵՒ ՍԱՄԱՐ.

(Ժուրտ էլ Պալուք, Պալիմեն դէպի Պրումանայի ձամբուն վրայ)

ԳԵՂԱՏԵՍԻԼ ՎԱՅՐ, ԾԱՌԱՋԱՐԴ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄՈՆՈՒՈՐՏ

- Միշտ առատ եւ թարմ աղանդեր, համարած ձաշեր մաւե ըստ ապապարմքի:
- Հայկական, արաբական եւ եւրոպական երաժշտութիւն:
- Ամեն Բնօրշապի, Ուրբաթ, Շաբաթ երեկոցներ եւ Կիրակի կեսօրին, յատուկ յայտագիր հանրածանօթ երգիչներու եւ ճաշագոյնմիջ ընկերակցութեամբ եւ մասնակցութեամբ արաբական պարուհիի:
- Փոքրերու յատուկ խաղավայր:
- Կը ստանձնենք միութեանական եւ անձնական խրախմանքներ յարմար գիներով:

ԾԱՆՕԹ. - Յատուկ ձաշացուցակ, 27 տեսակ բաց աղանդեր, բաց խորոված, բաց խմիչք՝ օղի, գարեջուր եւ զովացուցիչ:

♦ Մեկ անձի համար միայն **17\$:**

Ընտանայն. 04 - 808707 / 03 - 360667:

ՀԱՐԻՐԻ ՓԱՐԻՉ ՄԵԿՆԵՑԱՒ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ մեկնեցաւ Փարիզ, ուր երկուշաբթի օր տեսակցութիւն մը պիտի ունենայ Ֆրանսայի նախագահ ժաք Շիրաքի հետ: Շիրաք ճաշկերոյթ մը պիտի տայ ի պատիւ Հարիրիի, մասնակցութեամբ Ֆրանսայի վարչապետ ժան Փիեռ Ռաֆարէնի եւ արտաքին գործոց նախարար Տոմինիք տը Վրիֆէնի:

Այնուհետեւ, Հարիրի իր ֆրանսացի պաշտօնակիցին հետ տեսակցութիւն մը պիտի ունենայ: Իր հանդիպումներուն ընթացքին Հարիրի պիտի քննարկէ Միջին Արեւելքի զարգացումներն ու երկկողմանի յարաբերութիւնները, հազորդեց Ազգային Լրատու Գործակալութիւնը:

ՍԵԼԻՍ ՀԸՍԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՈՒԶԱՅԻ ԿԱՍՈՒՐԶԻՆ ԾՐԱԳԻՐԻՆ ՄԱՍԻՆ

Նախկին վարչապետ Սելիմ Հըր երէկ յայտարարեց, որ իր գլխաւորած կառավարութիւնը օրին հրաժարած էր Ուլայի կամուրջի ծրագիրէն, որովհետեւ անկախ անհրաժեշտութիւն մը չէր, նկատի առած որ հարաւ տանող այլ ճամբայ մը կառուցելու ծրագիր մը կայ օդակայանին արեւելքը գտնուող շրջանին մէջ:

«Պետական ծախսերն ու պարտքերը հակազդի տակ պահելու հարցը պետութեան առաջնահերթութիւններէն մէկն էր եւ այդպէս ալ կը մնայ», ըսաւ ան: Հըր վարմանը յայտնեց, թէ պետութիւնը ի՞նչպէս չի կրնար ապահովել հիւանդանոցներուն, կապալառուներուն, պետականացուած կայաններու սեփականատէրերուն եւ ընկերային ապահովագրութեան ազգային սնտուկին նկատմամբ իր պարտաւորութիւնները վճարելու գումարները, մինչ կը գտնէ անհրաժեշտ գումարը՝ գործադրելու այնպիսի ծրագիր մը, որ առաջնահերթ չէ:

ԱՐԱՔԹԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Երեսփոխան Ստանա Արաքթի պատասխանեց Ուլայի կամուրջին մասին Հըրի յայտարարութեան՝ վարմանը յայտնելով, որ Հըր իր հաստատեց, թէ իր գլխաւորած կառավարութիւնը հրաժարած է գործարդել օրէնք մը, որ կ'առնչուի Ուլայի կամուրջին, որովհետեւ անոր կարծիքով անհրաժեշտ չէր. հետեւաբար չգործարդեց օրէնքը եւ խորհրդարանին չներկայացուց պայմաններու առաջարկ մը:

«Այս ընթացքը հասկնալի չէ, բացի եթէ Հըր կը կարծէ, թէ պատասխանատու մը կրնայ յայտարարութեամբ մը չեղեալ դարձնել բարգաւաճումի օրէնք մը», ըսաւ ան եւ աւելցուց, որ Հըր մոռցած կը թուի, թէ օդակայանին արեւելքը գտնուող ճամբուն ծրագիրը Ուլայի կամուրջը չի փոխարիներ, այլ երկուքը պիտի կ'ամբողջացնէն:

ՄԱՀԱԶԴ

- Տիկին Ժաքլին Օտապաշեան եւ զաւակները՝ Մկրտիչ եւ Գարուին
- Տէր եւ տիկին Վարդան Սիսեան եւ զաւակը
- Տէր եւ տիկին Կարպիս Պէրպէրեան եւ զաւակը
- Տիկին Մարի Զարիստեան եւ զաւակուհի
- Տէր եւ տիկին Ֆիլիփ Սունաս եւ զաւակուհի
- Տէր եւ տիկին Սազո Պետրոսեան եւ զաւակուհի
- Տէր եւ տիկին Սամէր Հատաստ եւ համայն ազգականները կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր եւ հարազատին՝

ԱՒԵՏԻՍ ՕՏԱՊԱՇԵԱՆԻ

(Ծնեալ՝ 1944ին)

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 28 Յունիս 2002ին, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութիւնը պիտի կատարուի այսօր՝ Շաբաթ, 29 Յունիս 2002, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Մարաշի Ս. Բառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Կիլիկիա, Շաբաթ 29, Կիրակի 30 Յունիսին, եւ երկուշաբթի 1 Յուլիսին:

ՄԱՀԱԶԴ

- Տիար Յակոբ Այնիլեան
- Տէր եւ տիկին տոքթ. Ճորճ եւ Բէյթի Այնիլեան եւ զաւակները՝ Ճենի եւ Փօլ
- Տէր եւ տիկին Արամ եւ Անի Զոլյաբեան եւ զաւակը՝ Գարին
- Տէր եւ տիկին Յարութ եւ Սանտրա Այնիլեան եւ զաւակները՝ Ալէքս եւ Սիրիլիա
- Տէր եւ տիկին Քոյտ եւ Լարա Սուրի
- Տիկին Վերգին Մետրոպեան
- Այնիլեան ընտանիք
- Զոլյաբեան ընտանիք
- Իշխանեան ընտանիք
- Սուրի ընտանիք
- Մետրոպեան ընտանիք
- եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, մեծ մօր եւ հարազատին՝

ՃԵՆԻ ԱՅՆԻԼԵԱՆԻ

(Ծնեալ՝ ԳԱԶԷԶԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 28 Յունիս 2002ին, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Շաբաթ, 29 Յունիս 2002, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Հայ Աւետարանական Ա. եկեղեցի, «Մէքսիք» փողոց, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Յըրն Շրպպէի Հայ Աւետարանական գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Անթիլիաս, COOPի բող, «տոքթ. Սալիպ» փողոց, պանք Պիպլոսի կից, շրջ յարկ, Շաբաթ 29, Կիրակի 30 Յունիս, եւ երկուշաբթի 1 Յուլիսին:
- Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւն կատարել բարեսիրական հաստատութիւններու:

ՈՒԶԱՅԻ ԿԱՍՈՒՐԶԻՆ ԸԱՐՅՈ ԿԸ ԶԱՐՈՒՆԱԿՈՒԻ

«Էլիսար» հաստատութեան վարիչ խորհուրդի անդամ երկուշաբթի Նայեֆ Քրայի՝ չըզպալլայի լրատուական գրասենեակին մէջ տուաւ մամուլի ասուլիս մը, որուն ընթացքին ըսաւ, թէ 1997էի ի վեր կը պահանջէ գործադրել նախկին նախագահ Էլիսա Հըրատիի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի ստորագրութիւնը կողմ «Էլիսար» ծրագիրը, որ ոչ մէկակէսարկութիւն կ'ընէ Ուլայի կամուրջին:

Կառավարութեան վերջին ժողովին ներկայացուած տեղեկագիրը կ'ըսէ, որ «Էլիսար» կայաններուն պարպումի հատուցումներուն համար վնասած է 45 միլիոն տոլար, մինչ Ընկերութեան վարիչ խորհուրդի 14/3/1998ի հաստատեց, թէ 2250 բնակարաններու կառուցումը Մարամիլի եւ Սապրայի մէջ 55 միլիոն տոլար կ'արժէ, հետեւաբար վարչապետը կրնար պարպումի հատուցումին փոխարէն կառուցել այդ բնակարանները:

Քրայի մ'աւելեց, թէ 2250 բնակարաններու կառուցումը Մարամիլի եւ Սապրայի մէջ 55 միլիոն տոլար կ'արժէ, հետեւաբար վարչապետը կրնար պարպումի հատուցումին փոխարէն կառուցել այդ բնակարանները:

ՖԱՏՆԱԼՍ ԵՒ ԲԱՊԱՆՍ

Շիիններու Գերագոյն խորհուրդի փոխ նախագահ, շէյխ Ապտէլ Էմիր Բապալան երէկ ըսաւ, որ Ուլայի մէջ պատահածը ցաւալի եւ տխուր դէպք մըն էր, որ պիտի չպատահէր, եթէ հարցերը հանդարտօրէն ուսումնասիրուէին եւ տրամաբանական լուծումներ տրուէին:

«Այդ դէպքը պարպալէս հետեւանքն է յանապատասխան եւ անանց բաւարար ուսումնասիրութեան տրուած որոշումներուն. ուստի կոչ կ'ուղղենք, որ առնչութիւն ունեցող կողմերը լուծումներ եւ դարմաններ գտնելու համար դիմեն բնական մտածողութեան եւ հրաժարին սպառնալիքներ եւ մարտահրաւերներ ուղղելու ոճէն», նշեց ան:

Շէյխ Մոհամէտ Հիւսէյն Ֆատալլա երէկ ըսաւ, որ ինք կը մաղկայանէր իր կամուրջին հարցը լուծելի անարկայական եւ բնական ոճով մը, որ հաշու կ'առնէ բարգաւաճութեան շահերը: «Նաեւ կը մաղթեիք, որ բարգաւաճութեան ծրագիրներէն ոմանք կը սպառնան ամբողջ շրջանի մը բնակչութեան շահերուն, եւ այդ վտանգը կ'աւելնայ ողբերգութիւն դառնալու սահմանին հասած տնտեսական դժուարին այս պայմաններուն մէջ», ընդգծեց ան:

Շէյխ Ֆատալլա նաեւ վզուցացուց մինչեւ օրս հայրենիքին պաշտպանութեան առաջին գիծին վրայ մնացող դիմադրութեան դէմ դիրքորոշելու հետեւանքներէն:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՍՅԵՅՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ

Քրընէթ Շեհուանի հանդիպումին անդամներէն՝ Երեսփոխաններ Ֆարէս Սուլայմ եւ Մանսուր Լանէմ Պոն, ինչպէս նաեւ Սամիր Ֆրանսիէ եւ Սամիր Ապտէլ Մալաք երէկ այցելեցին մարոնիներու Պուլթրոս Սֆէյր պատրիարքին, որուն ներկայացուցին Լոս Անճելոսի մէջ գումարուած Մարոնիներու Միջազգային խորհրդագրովին տրուած միջնորոտն ու բանաձեւերը, ինչպէս նաեւ՝ երկու երեսփոխաններուն զօր. Միջէլ Աուհի հետ ունեցած հանդիպումին արդիւնքները:

Սուլայմ քննադատեց խորհրդագրովին առնչութեամբ կատարուած ծխտական յայտարարութիւնները, մինչ անոր եզրափակել հաղորդագրութիւնը Պէրքէն կը ճանչնայ իրբեւ մարոնիներու գերագոյն քաղաքական հեղինակութիւն, եւ պապական յորդորը, որ արար քրիստոնեաներու արարական դիմադրութեան պատկանելիութիւնը կը շեշտէ, իբրեւ ուղեցոյց: «Լոս Անճելոսի ժողովին բանաձեւերը այսքան բուռն հակազդեցութիւն պէտք չէ գտնեն, իսկ այդ հակազդեցութիւնն ու յայտարարութիւնները անիմաստ են եւ խորք չունին, որովհետեւ անոնց մեծամասնութիւնը յայտարարուեցաւ բանաձեւերը կարգալէ առաջ», ըսաւ Սուլայմ:

ՂԱՆԵՍ

Երեսփոխան Ռոպէր Լանէմ երէկ այցելեց մարոնիներու Պուլթրոս Սֆէյր պատրիարքին ապա յայտարարեց, որ քննարկած են Մարոնիներու Միջազգային խորհրդագրովին բանաձեւերն ու անոնց շուրջ բարձրացած աղմուկը:

«Պէտք չէ գործիք դառնանք ամբերկեան Մերակոյտի անդամներէն ոմանք», ըսաւ ան՝ ընդգծելով, որ «մարոնիներս կը պատկանինք մեր արեւելեան միջազգային, որուն հետ պէտք է ներդաշնակ ըլլանք ինչպէս կը թելադրէ պապական յորդորը»:

«Լարուածութեան պատճառը այդ ժողովին բանաձեւերուն ամբերկեան Մերակոյտին վերաբերող յօդուածն է», ըսաւ ան՝ կոչ ուղղելով ամրապնդելու ներքին միակամութիւնը:

ԱՊԻ ՆԱՍԵՐ

Երեսփոխան Նամթալլա Ապի Նասէր երէկ Սֆէյր պատրիարքին հետ տեսակցելէ ետք ընդգծեց, որ Լոս Անճելոսի մէջ գումարուած Մարոնիներու խորհրդագրովը առաջինը չէր, որ Լիբանանի գերիշխանութեան գծով կոչեր կ'ուղղէ, այլ անկէ առաջ բազմաթիւ նման ժողովներ յոյժմաստ պահանջներ ներկայացուցած են:

Ապի Նասէր գարմանք յայտնեց այս ժողովին որոշումներուն շուրջ բարձրացած աղմուկին համար քննադատելով թափաքի գործադրութեան ուղեցուցումը, «իսկ ստեղծուած են անփոփոխ մնացող կացութեան համակերպիլը կը տանի ստրկութեան»: Ան ըսաւ, որ այս ժողովին շուրջ բարձրացած աղմուկը արտաքին կողմերու ներշնչումով էր:

Ապի Նասէր նաեւ զատապարտեց Ուլայի դէպքը եւ երեսփոխան Ուլայի իտոյի դէմ արարքը, «բայց ասիակ յանցանքն է կառավարութեան, որ բռնազաւակներուն հատուցումներ կու տար, մինչ մեր շրջանները կը պատժուին: Իսկ եթէ նման դէպք մեր շրջաններուն մէջ պատահէր, տասնեակներ պիտի ձերկայուէին եւ ամբաստանուէին իրբեւ իսրայէլի գործակալներ»:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆԷՔ

ԵՒ ՍՐԲԱՆԿԱՐԻ ՕԾՈՒՄ

Կիրակի, 30 Յունիս 2002ին, Նոր Սիսի Ս. ՍԱՐԳԻՍ եկեղեցւոյ մէջ, յընթացս Ս. պատարագի պիտի կատարուի հայրապետական մաղաքը, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան գահակալին՝

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՄԵԾԻ ՏԱՆԸ ԿԻԼԻԿԻՈՅ

Օծման եւ գահակալութեան 7րդ տարեդարձին առիթով:

Արարողութեան պիտի նախագահէ եւ քարոզէ՝

ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

Նոյն առիթով, առաջնորդ սրբազանը պիտի կատարէ Ս. Արագի եկեղեցւոյ նուիրաբերուած սրբանկարին օծումը:

Կը հրակիրենք շրջանին հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու հանդիսաւոր նոյն հոգեպարար արարողութեան, առ Աստուած աղօթելու Արամ Ա. կաթողիկոսին քաջառողջութեան, արեւշատութեան եւ երկարամեայ ծաղկուն գահակալութեան համար:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՏԻՈՅ

ՎԱՐՉՈՒ ՏՈՒՆ

●Այնճարի մէջ: Ըեռ. 01-240325 եւ 01-243053:

ՇԱԽՈՒ ՏՈՒՆ

●Այնճարի մէջ: Ըեռ. 03-648202:

Կ'ՈՒԶՈՒԻՆ

●Վարպետ ոսկերիչներ (սետեքեր): Դիմել՝ հեռ. 03-666059:

Կ'ՈՒԶՈՒԻ

●Զուէթի մէջ աշխատելու համար, տիկին մը կամ օրիորդ մը: Մասնագիտութեամբ՝ ձեւագիտուի (haute couture): Դիմել՝ հեռ. 03-847485:

ԲԱՆՏԱՌՈՐՈՒՄԾ

Տէր եւ տիկին Լեւոն եւ Մարալ Փափապեան բախտարուած են առջինէլ աղջիկ պատկով մը

ՍՏԵՖԱՆԻ

28 Յունիս 2002

Khabbaz-Orient Plus
Travel & Tourism

Varna

Starting from 350\$
Including R/T ticket, 8 days bungalow, transfers, guides. Visa & taxes not included

3 days 3 days 185 \$
Bout trip to Cyprus & Greece 380 \$
01.900598, 901598 - 03.258336, 256254
www.orientplus.com

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ
«Ն. ԱՂԲԱԼԵԱՆ» ՄԱՍՆԱԾԻՒՂ ԱՆԹԻԼԻԱՍ

ԱՆԴԱՍԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

Տեղի կ'ունենայ Գործընթացի, 3 Յուլիս 2002, երկուշաբթի ժամը 8:00ին, Աղբալեան ակումբի «Սերժ Թովմստեան» սրահին մէջ:

ԾԱՆՕԹ.- Մեծամասնութիւն չզոյնալու պարագային ժամը 8:30ին ներկայանալու թիւ մեծամասնութիւն պիտի նկատուի:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

365 ՕՐԵՐԸՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ

Աստուածահաճոյ ազգասիրական արարք մը՝ հոգալ տարուան 365 օրերէն օրուան մը Շերա-Գոցի կէտօրուան ճաշի ծախսը 300 ամեր. տոլար: Նուիրատուներ կրնան դիմել ԶԱԿԻ տնօրէնութեան: Շերաֆոցի հեռ. թիւեր՝ 260533, 266822 եւ 260534:

ՏԱՐԵԿԱՆ ՄԱՍՈՆԱՅԻՆ ՔԵՐԱԼԵՍ

Կազմակերպութեամբ՝
Շ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ
ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆԻ

ԹՈՒԿԱՆ՝ ՅՈՒՆԻՍ 5, 6, 7, 2002:

ՎԱՅՐ՝ Պուրճ Համուտի Աղասարգիտեան փարքին, Մասքոր Մոլին կից:

ԺԱՄ՝ ԱՌԱՒՕՏԵԱՆ 10:00ԵՆ ՄԻՆՉԵՐ ԵՐԵԿՈՅԵԱՆ 11:00:

Մասնակցութեամբ՝

Coca-Cola

ԱՆՃԵԱՆ ԹՈՒՐԴԻ 2002Ի ԵՐԶԱՊՏՈՅՆԵՐ

●Ամեն Շաբաթ Պոլսոյ մէջ շքեղ զբօսանումը 8 օր Կիպրոս, Ռոտտո, Արթըր, Յունական կղզիները առանց վիզայի 380\$:

●Varna 8 օր 280\$, 15 օր 385\$, պանկալոնալաւաճառով:

●Կիպրոս 4 օրը 195\$, 7 օրը 235\$, պանկոլ, նախաճաշ + տոմս:

●Ամեն երկուշաբթի 8 օր Լայպտան 375\$, 15 օրը 530\$, պանկոլ, նախաճաշ, օդանայի տոմսակով:

●8-29 Յուլիս եւ 9-30 Օգոստոս, աշակերտական, սկստական եւ երիտասարդական, օրական 4 անգամ ուտելով, Սեւանի եւ Արգոնի մէջ տարբ տարբեր պոլոյտներով, տոմսը, վիզան + տուրքերով 399, 499, 555, 780\$, քոլիջը Լայպտան, յիշատակի նուրբներով:

●8 օր Եպրոս՝ Սե օրը 575\$ 15 օր 820\$: 2002ի նորոյր օրորարներով:

●Ամեն Կիրակի Դամասկոս, Սեւոնայ, Պոլսոյ 12\$:

●Էնտեք, Արթ, Ֆարայա 8\$, Սայոս, Սուր, Կամ 8\$:

●Ամեն առտու եւ իրիկուն Լայպ 9\$, Դամասկոս 6\$ նոր օրորարներով:

●Վարձու կու տանք մեծ եւ փոքր օրորարներ:

●Ամեն Շաբաթ Լարպիա 5 աստղան պանդոն 3 օր 75\$:
ԲԱՅՈՒՐԻ ԵՐԶԱՊՏՈՅ ԴԵՐԻ ԸՆՃԱՍՏԱՆ

●Ա - 8 - 15 Յուլիս, Բ - 12 - 19 Յուլիս առաջնակարգ պանդոլ, 5 օր պոլոյտներ, ճաշերոյր-պարահանդես, յիշատակի նուրբներով, ձրի վիճակահանութիւն, սկսեալ 575 \$ են, ներառեալ վիզան եւ օդակայանի տուրքերը:

ԱՆՃԵԱՆ ԹՈՒՐԴ ԻՆՈՒՆ 01-261177 - 240654 - 03-233978 - գիշերը՝ 01-258887:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԴՐԱԿԱՆ ԿԸ ԳՆԱՀԱՏԷ...

Շարունակում Ա. Էջեց

«Իսրայելի անգիղոզ եւ սանձարձակ կը մնայ, իսկ մենք կառչած ենք խաղաղութեան արարական նախաձեռնութեան, որուն կարեւորութիւնն ու խորքը ներկայացուց նախագահ Լահուտ սյուվաբ եւ չեխ պաշտօնատարներուն», յայտնեց Համաժողովուրդի նախագահ Լահուտ սյուվաբը, որ նախագահը նաեւ ընդգծած է անհրաժեշտութիւնը՝ պաղեստինցի գաղթականներուն հարցը լուծելու ՄԱԿի թիւ 194

որոշումին հիմամբ, եւ ռացիալ տարբերութեամբ Շրպան արտաքին գործերի Լիբանանի իրաւունքը: «Մենք դատ ունինք եւ այդ դատը պէտք է ներկայացնենք բոլորին, որովհետեւ պետութիւնները, անկախաբար իրենց բնակչութեան թիւէն, համահասարակ են, եւ չընկալուին ու միջազգային բեմերուն վրայ մեր դատերը հասկցող եւ անոնց զօրավիգ կանգնող բարեկամներ չհանրը

չառ կարեւոր է», դիտել տուաւ Համաժողովուրդի նախագահը: Ան հաստատեց, որ արարտաքին գործերի նախարարները իրենց ժողովներուն պիտի քննարկեն Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշի Միջին Արեւելքի մասին յայտարարութիւնը: «Մենք կը հետեւինք ամբողջական պատկերացումներուն գծով կեցուածքներուն ու հակազդեցութիւններուն, բայց Արաբական Լիգայի նախագահ

Լիբանանի այդ հանգամանքով կեցուածք յայտարարելէ առաջ պէտք է իրազեկ դառնայ Լիգայի բոլոր անդամներու կեցածքներուն», բացատրեց ան: Նախարար Համաժողովուրդի նախագահը շեշտեց, որ խաղաղութեան արարական նախաձեռնութիւնը անգիղոզի ամբողջութիւն մըն է, որովհետեւ անոր կէտերէն իւրաքանչիւրը կը վերաբերի իսրայելցի արաբական արդար պահանջի մը:

ԼՕՆ

ԿԻՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՅԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԻՆ

Երէկ, Ուրբաթ 28 Յունիսին ԼՕՆի «Արաբսի Պուլ-դուրեան» ընկերաբաշխական կեդրոնի «Թնճուկեան» սրահին մէջ տեղի ունեցաւ կեդրոնի ընկերային գրասենեակին կազմակերպութեամբ կայացած կիններուն յատուկ համակարգիչի դասընթացները աւարտած աշակերտներուն վկայականաց բաշխումը:

Ձեռնարկին բացումը կատարեց այս ծրագիրը համադրող եւ անգլերէնի ուսուցիչ Արաբսի Նուրիարեան, որ ներկայացուց կիններու անգրագիտութեան վերացման եւ անոնց յաւելեալ գիտելիքներ փոխանցելու նպատակով ի գործ դրուած ծրագիրին քառամսեայ տեղեկագիրը, որուն ընթացքին կինները հետեւած են լեզուներու եւ համակարգիչի ուսուցման: Ան ըսաւ, թէ Միջին Արեւելքի Եկեղեցիներու խորհուրդի հովանաւորութեամբ եւ ԼՕՆի ընկերային գրասենեակի կազմակերպութեամբ Ազգային Արհեստի վարժարանին մէջ սկսած է տարրական գիտելիքներու անվճար դասընթացը, որուն գլխաւոր նպատակն էր անգրագիտութեան դէմ պայքարը եւ հայ կիններուն տարրական անհրաժեշտ գիտելիքներու փոխանցումը: Ան ըսաւ, թէ առաջին հանգրուանը արդէն աւարտած է եւ շուրջ 60-65 կիններ հետեւած են համակարգիչի, հայերէն, անգլերէն եւ արաբերէն լեզուներու դասընթացներուն: Արաբսի Նուրիարեան նշեց, թէ ասոնց կողքին տեղի ունեցած են դաստիարակչական հաւաքներ, որոնց ընթացքին փոխանցուած են հոգեբանական, ընկերային, առողջապահական եւ դաստիարակչական ընդհանուր գիտելիքներ: Ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք օժանդակեցին այս ծրագիրին իրագործման:

Ապա խօսք առաւ Սուէ Ճիւպաշեան, որ ըսաւ, թէ ի գործ դրուած այս ծրագիրը կը միտի ընդարձակել հայ կնոջ մտահորիզոնները եւ օգնել անոր, որպէսզի իր տան նեղ սահմաններէն դուրս գալով քայլ պահէ դարուն հետ: Ան ըսաւ, թէ ԼՕՆը անպակի կառուց մըն է, որ կ'ապրի ամէն մարդոց ստանձանքի եւ կը միտի օժանդակել բոլորին եւ ստոր զլիսաւոր փաստը:



Ծրցանաւարտները իրենց ուսուցիչներուն հետ

կիններու յատուկ այս դասընթացն է: Իր խօսքի աւարտին Ս. Ճիւպաշեան ըսաւ, թէ շատ կարեւոր է մայրերը դաստիարակել, որովհետեւ անոնք իրենց կարգին սերունդներ պիտի կրթեն:

Դասընթացներուն հետեւող կիններուն կողմէ խօսք առաւ Վարդուհի Ճղաշեան, որ շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք իրենց ընծայած են այս անսխալ ծրագրի մասին: Եւ օժանդակած իրենց կասկածելի եւ դողող քայլերով սկսած ուղին յաջողութեամբ եւ ինքնավստահութեամբ աւարտելու: Ան նշեց, թէ այս դասընթացները եւ փոխանցուած ընդհանուր գիտելիքները ծառայած են հայ ընտանիքի բարգաւաճման եւ զարգացման: Ան նշեց, թէ ԼՕՆը իր այս ծրագիրով եկաւ փաստելու, թէ ուսում ստանալու համար տարիքային սահմաններ կամ այլ արգելքներ չկան:

Ապա շրջանաւարտ կինները առ ի երախտագիտութիւն ծաղկեփունջեր յանձնեցին իրենց ուսուցիչներուն, պատասխանատուներուն եւ յանձնախումբի անդամներուն: Ապա 19 կիններ ստացան համակարգիչի համապատասխան դասընթացներու վկայականներ:

Ձեռնարկին փակման խօսքը արտասանեց ԼՕՆի Շրջանային վարչութեան ատենապետ Սեդա Նուրշեան, որ ըսաւ, թէ ԼՕՆի առաքելութեան հիմնական նպատակը հայ կնոջ հոգեմտաւոր զարգացումն է, որուն իսկական մէկ արտայայտութիւնն է այս դասընթացները: Ան շնորհակալութիւն յայտնեց ծրագիրը յաջողոցներուն եւ բարի երթ մղող շահակերտներուն: Ձեռնարկի աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

ԿՈՒՉՈՒԻ

● Հաստատութիւն մը կարիք ունի երիտասարդ վաճառող պաշտօնեայի մը: Անգլերէն եւ ֆրանսերէն գիտնալը պայման: Նաեւ պէտք է ունենայ ինքնաշարժ վարելու արտօնագիր: Դիմել՝ հեռ. 01-262653 թիւին:

ԾԱԽՈՒ 3ԱՐԿԱՐԱԺԻՆ

● Ծամբորդութեան պատճառով, 140 քառ. մետր տարածութեամբ, գեղատեսիլ դիրք, բնակարանի, գրասենեակի կամ դարձնալու յարմար, Պառլիքի, «Կալէրի Իթի-հատ» ի մօտ, հեռ. 03-226435 եւ 01-899718:

TANIA TRAVEL
Sodeco Square - Rue de Damas
Tel: (01) 618858/8/7/8 - Fax: (01) 618661
Rue Sidani - Face Cinema Jeanne d'Arc
Tel: (01) 738870/82/3/4 - Fax: (01) 340473
Website: www.taniatravel.com

Տեղի անգլերէն ժողով ֆերրաքեան

CHARTERS

PALMA DE MALLORCA
8 Jours \$ 720

ESPAGNE, PORTUGAL & MAROC
7 prog. 8a' 15 Jours \$ 955
Départs tous les Mardis

RHODES
8 Jours \$ 355

MYKONOS
8 Jours \$ 500
Départs tous les Lundis

Jel-el-Dib 730308/8/7
013781678/82080 - Saïda 730870/
730370
Jbel 942744 - 943368
Zahle 808947 - 802592
Tripoli 627758/602469 - Amioun 980075

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

28 Յունիսի տեղական մամուլը գլխաւորաբար լուսարձակելով անոնց է Ուլայի կամուրջին հարցով 150 ստեղծուած կացուածքները եւ պաղեստինեան հարցը:

«Նահար» իր առաջին էջով գրած է. «Նահարարաց խորհուրդը կը վերահաստատէ Ուլայի շինարարական ծրագիրներու կարեւորութիւնը. վարչապետ Հարիրի կը յայտարարէ. - Դիմադրութիւնը ոչ մէկ շահ ունի ժողովուրդին դէմ կենսալու: Ըստ «Անուար»ի, «նախարարաց խորհուրդը Ուլայի կամուրջին հարցը կը կարգաւարտէ ընդհանուր եւ ամբողջական ծրագիրի մը գործարկութեան: Կարգ մը շրջանակները կառավարութիւնը կ'ամբաստանեն, թէ Ուլայի հարցը մէջտեղ հանեց տնտեսական վտանգաւոր երեւոյթներ ծածկելու համար»: Թերթը կը նշէ, թէ Ուլայի ժողովուրդը յայտարարած է, որ Ուլայի կամուրջին շինարարութիւնը ներկայիս անապահովութիւններուն մաս չի կարգաւարտուած, որովհետեւ անոնք իրենց արժանաւորութիւնը կ'արժեքահարկեն: Իրապարհական տեսակէտէն՝ հարցին արժարժան մասնաւորաբար ընտրուած է»:

Ըստ «Լիուա»ի, «վարչապետ Հարիրի կառավարութեան նիստին պարզեց Ուլայի հարցը եւ Հրպարակային պահանջները՝ ըսելով. - Ինչպէս կրնանք

500 վաճառատուներ եւ 700 բնակարաններ քանդել՝ ամբարն ընդունելու համար եւ իր կամուրջին հարցով 150 միլիոն տոլար ծախսել: «Տիար» օրաթերթը իրապարհական է Ուլայի հարցին մասին յայտարարուած մանրամասնութիւնները: Միջազգային գետնի վրայ իրապարհական օրաթերթերը գլխաւորաբար անդրադարձած են Պուշի ճառին, պաղեստինեան հարցին եւ իսրայելեան իրադարձութիւններուն:

«Ութերու Խմբակի վեհաժողովը զօրավիգ կը կանգնի Իսրայելի եւ պաղեստինեան պետութիւններուն ստեղծման, բայց Արաբսիի հետ վերաբերելու հարցին շուրջ տարակարծիք կը մնայ. վեհաժողովը 20 միլիոն տոլար պիտի յատկացնէ Ռուսիոյ, որպէսզի նախկին խորհրդային Միութեան երկիրներէն կորիպայի հրթիռներ չտրամադրուին ահաբեկչական խմբակներու», գրած է «Նահար»: «Քիֆահ Արապի»ի համաձայն, Իսրայել յայտարարած է, թէ պիտի ձախողեցնէ Սուրիոյ, Իրաքի, Լիբանանի եւ Իրանի պիտի ծրագիրները: «Սաֆիր» նշած է. «Իսրայելի նոր տուեալներ կը իրապարակէ Հրպարակային լաշի դէմ, Խալիլի շրջանին մէջ պիտեալ մը եւ Թէ Ալիի մէջ լրտես մը կը պիտեալուին: Ըստ Իսրայելի, անոնք Հրպարակային անդամ են»:

Ըստ «Մուսաբալայ»ի «Լիուա»ի, նահարարաց խորհուրդը մերժեց Պուշի ճառը, իսկ վարչապետ

ուր ըսաւ, թէ «Պուշի ճառը անակնկալ հարուած մըն է եւ կարելի է խաղաղութեան հասնիլ՝ այնքան ատեն որ Շարուն իշխանութեան վրայ է»:

Թերթերը նաեւ գրած են, թէ նախագահ Լահուտ Չեխիւսի կողմէ ուղղած է խաղաղութեան միջազգային խորհրդաժողովի մը: Անոնք նաեւ նշած են, թէ քաղաքական շփումներ տեղի կ'ունենան Օմար Քարամէն եւ Սլէյման Ֆրէնժիէն հաշտեցնելու համար:

Միջազգային գետնի վրայ, թերթերը անդրադարձած են Քուլայի նախագահ Ֆիտիլ Քասթրոյի յայտարարութեան, ըստ որուն, Հաւանա պիտի չջեղի ընկերվարութեան եւ պիտի չվերադառնայ իրապարհական կարգերուն:

Լիբանանեան ներքին կենսանքի մասին թերթերը կը շարունակեն իրենց ուսումնասիրութիւններն ու հարցազրոյցները: Ըստ թերթերուն, արդէն շարունակ սկսած է եւ այդ ծիրին մէջ անլի լաւ ապագայ մը կը նախատեսուի:

«Սաֆիր» օրաթերթը իր ներքին էջերը նուիրած է եգիպտացի նշանաւոր դերասանուհի Սուա Հիւսնիի իրապարակէ Հրպարակային լաշի դէմ, Խալիլի շրջանին մէջ պիտեալ մը եւ Թէ Ալիի մէջ լրտես մը կը պիտեալուին: Ըստ Իսրայելի, անոնք Հրպարակային անդամ են»:

Ըստ «Մուսաբալայ»ի «Լիուա»ի, նահարարաց խորհուրդը մերժեց Պուշի ճառը, իսկ վարչապետ

ՎՃԻՆՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԵԹՆԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆ

Հիմնուելով Ժամ Խալիլի Բֆորիի կողմէ Խաչիկ Գրիգոր Սասունեանի դէմ յղուած թիւ 156/1998 դիմումին վրայ, որուն նպատակն է գանձել երեք «չէք» երով վճարելի 53,200 տոլար եւ գումարին օրինակային տոկոսներն ու կցուած ծախսերը, վճիռներու գործարարութեան Մեթնի գրասենեակին պէտք 21/6/2002ին որոշեց իրապարակել այս յայտարարութիւնը՝ պահանջելու, որ խնդրոյ առարկայ հանգուցելու Խաչիկ Գրիգոր Սասունեանի ժառանգորդ անչափահաս դուստրին՝ Փաթիլին օրինակային ներկայացուցիչը ներկայանայ գրասենեակ, որպէսզի անոր յանձնուին այս հարցին վերաբերեալ պաշտօնական թուղթերը: Իսկ եթէ յայտարարութեան վերջին «իրապարակումն» մինչեւ երկու ամիս մնալ լիազօր ներկայացուցիչ չներկայանայ, ապա գրասենեակ սերտի հիմամբ պիտի նշանակէ ներկայացուցիչ մը, որ պիտի դառնայ օրինակային լիազօր ներկայացուցիչը:

ՎՃԻՆՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԵԹՆԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ՊԵՏ ՍՈՒՐԱՏ ԵՆԼՈՒ

A VENDRE

● DUPLEX A RABIEH (RUE 9), 270 M2, VUE PANORAMIQUE, 5 CHAMBRES A COUCHER + SALON + SALLE A MANGER. PRIX: 150.000 \$. TEL: 01/269924 - 01/261741 (9:00 AM - 4:00 PM).

ԾԱԽՈՒ ԽԱՆՈՒԹ (ՏԱՍԱՆՈՎ)

● Ինքնաշարժ մեքանիքի գործի յարմար, Բաճրնի մայր ձամբուն վրայ, հեռ. 03-932678 եւ 1-562023:

ԿՈՒՉՈՒԻ

● Վարպետ ոսկերիչ մը. հեռ. 03 - 882947:

ԾԱԽՈՒ 3ԱՐԿԱՐԱԺԻՆ

● Պուրճ Բամուսի մէջ, 100 քառ. մետր, վերելակով եւ կառատուցով օժտուած: Հեռ. 03-609217 պր. Շարպիլ:

ՇՆՈՐԸԱԿԱԼԻԵ

● Տիար Կարպիս Գասարեան եւ ընտանիք շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպաակով եւ նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց կնոջ, մօր եւ հարազատի՝ ԱԼԻՍ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ մահուան սուգին:

ONE SECOND IS ENOUGH... ԱՐԿԱՅԸ ԿԸ ՊԱՏԱԿ ԵՐԿԱՅՐԿԵԱՆ ՍԸ ՄԵՋ...

...BUT WE USE THEM ALL. ...ԻՍԿ ՄԵՏԵ ՆԵՐԿԱՅ ԵՆԵ ԱՄԵՆ ԵՐԿԱՅՐԿԵԱՆ.

ԱՏՏԻԼ AFHIL

ԱՄԵՆ-Ի ԵՆԵ, Բ. Յարկ, 7-րդ. Եւ Յարկ. (01) 262231-242556-242557
Irm. AFED, 2-րդ. Ետա, T. Եւ Fax: (01) 262231-242556-242557

ԳՈՐԾԱԾԵՅԷՔ FUEL CARD

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆ՝ ՍՓԻՒՌՔ Բ. ԽՈՐՀՐԳԱԺՈՂՈՎԻՆ

Ստորև կու տանք Հայաստան-Սփյուռք Բ. խորհրդածոլոկին օրին մեջ Համազգայինի Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ Սկրտիչ Սկրտիչեանի ներկայացուցած զեկոյրը:

ՀԱՅՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՄԻԱՌՈՒՄՆԸ ՀԱՐՅԵՐ

Մշակոյթը, գիտու-թիւնը ու կրթութիւնը ժողովուրդի մը կեանքին մէջ անոր գոյատեւումը ապահովող մարզեր են. հետեւաբար ազգային քաղաքական ռազմավարութեան մաս կը կազմեն անխուսափելիօրէն սակէ՛ կը բխին անոնց հիմնական կարեւորութիւնը:

ՀԱՅՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՄԻԱՌՈՒՄՆԸ ՀԱՐՅ

Այսօր, տասնամեակ մը առաջ ստեղծուած միջազգային նոր պայմաններուն մէջ, հայութիւնը պատեհութիւնը ունի համեմատաբար անկաշկանդ ձեւով հաղորդակցութեան մէջ մտնելու ամբողջ աշխարհին հետեւեալ, ինչ որ աւելի կարեւոր է, հայութեան զանազան հատուածները հաղորդակցութեան մէջ կրնան մտնել իրարո՛ւ հետ. բան մը, որ կարելի չէր դեռ մտաւոր անց-եալին: Հայ ժողովուրդը, պատմական վերիվայրուամենքու իբրև արդիւնք բաժան-բաժան եղած, միտն ալ ունեցած է աշխարհագրական ու հոգեկան վերամիաւորման ճարտ. այսօր ալ ունի: Տասնամեակներով, երբեմն դարերով իրարմէ բաժնուած, քաղաքակրթական տարբեր միջավայրերու մէջ զարգացած, իրարմէ առաւել կամ նուազ չափով օտարացած հայկական բոլոր ենթահասակաւորութիւնները աւելի լայն կարելիութիւններ ունին ներկայիս կրկին գիրար վերագտնելու եւ գիրար ճանչնալու. հետեւաբար՝ աստիճանաբար վերամիաւորուելու:

Արդ, հանրածանօթ իրականութիւն է, որ անհատին հաւաքակա-նութեան մը պատկանե-լիութեան գլխաւոր ստորոգելիները պէտք է փնտռել մշակութային արժէքներուն մէջ. լեզու, արուեստներ, սոցիո-րուսթիւններ, հասարակաց հաւաքական անցեալ, մտածելակերպ ու վարուելակերպ: Այսպիսի մշակութային ստորոգելիներու հասարակաց նուազագոյն ամբողջութիւն մը պահպանելով՝ հայկական ենթահասակաւորութիւնները կրցած են ամբողջական պատկանելու զգացումը երկար ժամանակ պահել, հակառակ արտաքին ազդակներու պատճառած առաւել կամ նուազ չափով լուրջ մշակութային աղակազոյցներուն:

Յանկալի մշակութային աւելի խորունկ միաւորման ժամանակը օրէ օր կը հասունանայ այլեւս: Հաղորդակցութեան յաճախականութիւնը ու որակը կը պայմանաւորեն մշակութային միաւորման արագութիւնը ու աստիճանը: Հաղորդակցութեան նպատակը միատեսակ հայր ստեղծելու չէ, այլ՝ զիրար հասկը-ցող, որոշ չափով նոյն նախնան լեզուամտածո-

ղութեան տէր հայ անհատներու հաւաքակա-նութեան մը ստեղծումը, որ այսօր գոյութիւն չունի տակաւին: Հաղորդակցութիւնը բնական ընթացքով կը հասցնէ այդ միաւորման, սակայն երկար ժամանակի կը կարօտի, եթէ տարբարային կերպով գործէ ան: Հարցը նպատակաւորութեան յատուկ միջոցներու կիրարկումով այդ միաւորումը արագացնելու մէջ կը կայա-նայ:

Որո՞նք են այն միջոցները, որ հաղորդակցութիւնը կը դարձնեն աւելի արդիւնաւէտ:

ՀԱՂՈՂԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԼԵԶՈՒԿԱՆ ՀԱՐՅ

Առաջինը, անշուշտ, լեզուն է՝ մարդկային հաղորդակցութեան ամէնէն հիմնական միջոցը: Հայրենիքը ունի կրթական իր լայնատարած ցանցը, ուր ազգային լեզուն կը դասաւանդուի, ունի հարուստ առօրեայ գրականութիւն, ուր լեզուն կը զարգանայ ու տեսաբար կ'արդիականանայ: Սփիւռքն ալ ունի իր կրթական՝ համեմատաբար փոքր ու անկատար ցանցը, ուր հայ-լեզուն յամառօրէն վերապրելիութեան պայ-քար կը մղէ՝ դիմադրելով ճնշումներու դէմ: Հետեւաբար այս մարզին մէջ գործակցութիւնը անյետաձգելի է: Բայց այս-տեղ կայ հիմնական գոտարուսթիւն մը, որուն հարթումը անհրաժեշտ է, որպէսզի հաղորդակցութիւնը կարենայ տակաւին: Գոտարուսթիւն է, արդէն, երկու զարգացած լեզուներու գոյութիւնը. աւելի մեծ խոսքը դուրս է երկու ուղղա-գրութիւններու գործա-ծութիւնը: Այս հարցը, ինչպէս ըսուեցաւ, գոյութեանակա-նուազմով արձանագրուած է: Այս հարցին շուրջ հրապարակային բանավէճը տեղի կ'ունենայ այնքան կրթոտ նախապաշարու-մներով եւ արտայայտու-մամբ, քան ենթահա-ւաքակաւորութիւններու միաւորման կը նպաստէ: Ողջմիտ բան կ'ըլլայ, եթէ մասնագիտական խումբի մը կազմութեամբ լու-սարձակներէ հեռու պատկան հանրութեան մական հանրութեան ներկայացուցիչներ կայ՝ հայ ժողովուրդին համար պատմական ու գործնական նկատման-ով բխող կարեւոր ուղղազգրական կամ այլ բարեփոխումներու անհրաժեշտութեան աստիճանի հարցը: Լեզուական-ուղղազգրական հարցին լուծումով աւելի իմաստա-լից են օգտակար կը դառնայ կրթական անձնա-կազմերու փոխանակման գործը, մանաւանդ հայ-լեզուական նիւթերու պարագային. ինքնին հասկնալի է, որ յատկա-պէս սփիւռքահայ ուսու-ցիչներու Հայաստանի մէջ վերաորակաւորումը

կը դիւրացնէ անոնց առաքելութիւնը եւ կը նպաստէ հայապահպանման գործին՝ նոյնիսկ եթէ այդ վերաորակաւորումը առաւելաբար զբոսաշրջային բնոյթ ունենայ: Այս հարցին շուրջ սին վէճերը վնասակար են. անհրաժեշտ է կարելի արագութեամբ եզրակացնել ու սկսիլ համապատասխան գործի, այլապէս կարճ ժամանակի մէջ աւելի լուրջ կացութիւններ կրնան յառաջ գալ. այսօր, մեր աչքին առջեւ, գրեթէ բոլորիս մեղսակցութեամբ անհա-կակչիւ կերպով կը զարգանայ ելեկտրոնային լատիւստառ հայերէն մը՝ մասնաւորաբար երի-տասարդութեան կողմէ գործածուող. ասիակ է հայերէն ընդհանրական լեզուին՝ հետեւաբար հայ մշակութային համար մե-րօրեայ ամենէն մեծ վտանգը:

ԵՐԻՏԱՍՈՐԳԱԿԱՆ

Երկրորդ՝ ապագային նայող կարեւոր հարցը սփիւռքահայ երիտասարդութեան հայրենիքին հետ հաղորդակցութեան հարցն է եւ անոր աստի-ճանական մերումը հայ-րենի երիտասարդու-թեան հետ: Համահայկա-կան միջերիտասարդա-կան հանդիպումները հայրենիքին մէջ, ինչ ընտելի ալ ըլլան անոնք (ճամբար, դպրոցական համալսարանական հան-դիպումներ, մարզական հանդիպումներ, արդիա-կան համալսարանի հանդի-պումներ, յուշարձանե-րու վերականգնման աշ-խատանք եւ այլն), կը նպաստեն մշակութային փոխանակման՝ հետեւա-բար փոխհարստացման, նաեւ՝ հայապահպան-ման. սփիւռքահայ երի-տասարդը աւելի իրագե-կը դառնայ հայկական հարագատ մշակութային արժէքներուն եւ միաժա-մանակ ուղղակի կը փո-խանցէ իր արտասահման-եան միջավայրին մշակ-կութային արժէքներէն փունջ մը, եւ այս փոխա-կը զարգացնէ հայկական նոր մշակոյթը: Այս ուղ-ղութեամբ թերեւս աւելի հրապուրիչ պէտք է դարձնել հայրենիքի ճամ-բարային կառուցումը: Հաւանաբար պէտք է սկսիլ նաեւ երիտասար-դական հիւրանոցային ցանցի մը ստեղծման երկ-րի տարածքին, որպէսզի ոչ միայն հայ, այլ նաեւ օտար երիտասարդու-թիւնը քաջալերուի Հա-յաստան այցելելու եւ զայն ճանչնալու, ինչ որ պիտի նպաստէր նաեւ երկրի քարոզչութեան: Միաժամանակ պէտք է մտածել երիտասարդա-կան դէպի Հայաստան զբոսաշրջային եւ ուսումնական օգնական-ային փոխադրածախսերը իրենց իրենց կարելի նուազագոյնին: Տարբեր միջավայրերու մէջ մեծ-ցած երիտասարդական

ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏԻՉԵԱՆ
Երեւան, 28 Մայիս 2002
Շար.ը՝ էջ 8

ԱՉԳԱՅԻՆ ՍՐՈՑ ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍՆԵՐ



Կիրակի, 23 Յունիսին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ տեղի ունեցան Ազգային Սրբոց Քառասնից Մանկանց վարժարանի ամսվերջի հանդէսները:

Առաւօտեան ժամը 11:00ին կայացաւ մանկապարտէզի հանդէսը, որուն ընթացքին ներկայացուեցաւ զեղարուեստական ճոխ յայտագիր: Աշակերտները հանդէս եկան «Քայլերգ մանկապարտէզի», «Ժառանգներ ենք Արցախի», «Ես թիթեմ եմ», «Թրի լիթըլ մանրիկ», «Մատրասաթի եւ մատրասաթի» եւ այլ երգերով, ներկայացուցին «Թ՛գուկներու պարը», ինչպէս նաեւ՝ հայկական, եւրոպական եւ արաբական պարեր, «Ակամայ մեռնցեմ» թատերախաղը եւ խմբային «Մնաս բարով» արտասանութիւնը: Մանկապարտէզի աշակերտներուն կողմէ ուղերձ կարդաց Հրակ Լէֆեճեան: Ապա խօսք առաւ վարժարանի տնօրէն Յովիկ Պէրթիզեան, որ անդրադարձաւ հայ վարժարանի անհրաժեշտութեան եւ նորափթիթ քայլերով իրենց ուղին սկսած աշակերտներուն բարի երթ մաղթեց:



Տնօրէնութեան խօսքէն ետք վկայականներ ստացան՝ Գարին Գաւտաթեան, Մեղրի Գիւլիւսեան, Նաթալի Գնտոյեան, Մարիա Գուրուսեան, Փարիլ Գրիգորեան, Ռաշա Գուստի, Աննա-Մարիա Մարգարեան, Նիմա Մարգարեան, Մարիա Յովհաննէսեան, Նանոր Բեօսեան, Շողակ Պապարպեան, Մարիա Պիլմեճեան, Սեյնա Պոզոնեան, Փեկի Տիարպի, Նարեկ Ազնիվեան, Յարութ Առաքելեան, Սերժիո Գալստեան, Նարեկ Գոնցյեան, Մկրտիչ Գուրումեան, Գօգո Գրիգորեան, Էտմոն Թադեոսեան, Եղիա Թեմամեան, Հրակ Լեֆեճեան, Զորիկ Պետրոսեան, Մհեր Սալուսեան եւ Կարեն Բեշիշեան:

Վարժարանի նախկին թատերախմբի անդամներու ներկայացուցին խմբային երգեր՝ «Հնչեց գանգեր», «Արեւաշող իմ Հայաստան», «Այբուբենի հայոց», «Արփա-Սեւան», «Սպարապետ», երոթ ունեցան «Էրգուրմի շորը», «Վասպուրականի պար» հայկական պարերով, «Խօսք իմ որդուն», «Արմինի-ըն Ուլի», «Հէգիթիլ արտ լի» արտասանութիւններով եւ «Հայոց լեզու» թատերական ներկայացումով: Շրջանաւարտներուն անունով ուղերձ արտասանեց Նայիրի Աւագեան:

Գեղարուեստական յայտագիրին յաջորդեց վարժարանի տնօրէնի խօսքը, որուն մէջ ան շեշտը դրաւ




հայրենի գաստիարակուելու եւ հայրենի գաստիարակելու անհրաժեշտութեան վրայ: Ան բարի երթ ու յաջող ապագայ մաղթեց շրջանաւարտներուն եւ ըսաւ, թէ անոնք պէտք է լաւապէս գիտակցին, թէ իրենց տուած է հայ լեզուն ու մշակոյթը պահելու եւ իր-րեւ աւանդ իրենց յաջորդներուն փոխանցելու պարտականութիւնը: Ապա օրհնութեան խօսք արտասանեց Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպ. ինչքերեան, որ անդրադարձաւ նոր սերունդի օտարացման մտահոգիչ երեւոյթին: Ան ծանրացաւ հայ դպրոցի առաքելութեան եւ նոր սերունդի հայկական նկարագրի կերտման անհրաժեշտութեան վրայ: Ապա խօսքը շրջանաւարտներուն ուղղվելով ըսաւ, թէ կեանքի մէջ

ՄԵՐ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՀԱՐՅԱԶՐՈՅՑ՝ ՆԱՐԵԿ Ա. ՔՀՆՅ. ՇԻՐԻՔԵԱՆԻ ՀԵՏ

Մայիսին, Միացեալ Նահանգներու Լոս Անձե-լըս շրջանին մէջ, ժողովրդա-յին խրախճանք մը տեղի ունեցաւ՝ ի նպատակ Այնճարի «Յառաջ - Գ. Կիւլ-պեմեան» երկրորդական վարժարանին, որուն ընթացքին համաձայնագրուեցաւ 45,000 տոլարի գումար մը եւ 100,000 տոլարի իշխանական ցուցարարութեամբ մը Նարեկ Ա. քնյ. Շիրիքեանի ընտանիքին կողմէ հիմն դրուեցաւ Ազգային վարժարանին ծառայելու կոչուած հիմնադրամին:



Օգոստեւոյ Տէր հոր Լիբանան գտնուելու առիթն, հետը ունեցանք հարցազրոյց մը, այս աշխատանքին մօտէն ծանօթանալու եւ ապագայ ծրագիրներու մասին տեղեկութիւններ ստանալու համար: Ստորեւ տրուած հարցազրոյցը կրնայ բարի օրինակ ծառայել Ազգ. վարժարանները ամուր պահելու նպատակ ունեցող բոլոր շրջանները:

ՀԱՐՅԱԶՐՈՅՑ. Կարելի Է ամփոփ գիծերու մէջ ներկայացնէք ձեր կեանքի ուղին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նախ ըսեմ, որ ես բնիկ մուսալիմ եմ: Այնճարի հիմնադրութեան վկաններէն եղած եմ, այդ աշխատանքներուն մասնակցած եմ պատանի հասակիս ամբողջ տարի մը, 1939-1940ին: Եղած եմ «Յառաջ» Ազգային վարժարանի բարձրագոյն դասարանի առաջին աշակերտներէն, 1941ին: Գիւղի գաւազ, գիւղն ու գիւղացին սիրած եմ իրենց ամբողջութեան մէջ, կեանքիս ամբողջ ընթացքին, հակառակ անոր որ յատուկ առաքելութեամբ երկար տասնամեակներ գիւղէն հեռու մնայի:

1953-1956 ժամանակաշրջանին Մեծի Տանն Կիլիկիոյ Դպրոցանքի քահանայից դասարանին աշակերտեցի եւ քահանայ ձեռնադրուեցայ 1955ին, ծառայելու համար Այնճարի մեր համայնքին՝ իմ սիրած գիւղիս մէջ: Միեւնոյն ատեն օգնելու «Յառաջ» վարժարանի ուսումնական աշխատանքներուն:

1956ին արդէն վերադարձած էի գիւղս՝ Այնճար: Եկեղեցի չունէինք: Դպրոցի դասարաններուն մէջ երկար տարիներ (20 տարի) կատարուեցան ծէսերն ու արարողութիւնները: Առաջին իսկ օրէն սկսայ մասնակցել դպրոցական աշխատանքներուն՝ իբրեւ ուսուցիչ, ապա, տնօրէն, միեւնոյն ատեն, եկեղեցի կառուցելու աշխատանքներուն լծուեցանք:

1960ին, Մ. Պողոս եկեղեցիի կառուցուած էր արդէն: Այս մասին կարելի է երկար խօսիլ...:

1956-1963 եօթը ամբողջ տարիներ, մինչեւ Միացեալ Նահանգներ մեկնումս, յատուկ առաքելութեամբ, եկեղեցին եւ դպրոցը եղան աշխատանքներու զխաւոր մտահոգութիւնը:

Այս բոլորը ըսի, որպէսզի հասկնաք, թէ ինչու ես եմ ինձի նման բոլոր մուսալիմներէն, ուր ալ ըլլան անոնք, իրենց ամէնօրեայ կեանքին ու մտահոգութիւններուն մաս կը կրգմէ Այնճար իր ամբողջութեամբ, մանաւանդ, «Յառաջ - Գ. Կիւլպեմեան» երկրորդական վարժարանին վերելքին ապահովումը:

Հ. Ինչու, ի՞նչպէս եւ ովքե՞ր կազմակերպեցի՞ն ազգօգուտ այս նախաձեռնութիւնը:

Պ. Կեղոնանալով «Յառաջ - Գ. Կիւլպեմեան» վարժարանին տնտեսապէս օժանդակելու մեր աշխատանքներուն վրայ, պէտք է ըսել, որ առիթ ստեղծողները եղան վարժարանի խնամակալութիւնն ու տնօրէնութիւնը, երբ պատճառաւոր զիմեցին մեզի այս ուղղութեամբ: Իրենք էին, որ Լոս Անձելըս, Քալիֆորնիոյ շրջանը եղողներուն՝ իրաւաբան Րաֆֆի Նարթալեանի, Յովհաննէս Գարագաշեանի (դպրոցի նախկին տնօրէններէն մէկը), Կայծակ Զէյթիւեանի, Ռոստոմ Այնթապեանի եւ ինձի իրագործութիւն տուին մեր տեղական պայմաններուն համաձայն հիմնադրամ մը հաստատելու աշխատանքին լծուելու:

Այս տարուան սկիզբը առաջին քայլեր առինք երկու ուղղութեամբ. նախ դպրոցի պիտուէին անմիջ-կան օգնութեան հասնելու, որպէսզի ուսուցիչներուն յետեւող պարտքերը վճարուին եւ արժանաւոր ու կարիքաւոր աշակերտներուն կրթութիւնը յատկաց-ւին: Ապա նաեւ հիմնադրամը հաստատելու առաջին քայլերը առինք:

Շնորհիւ յանձնախումբիս աշխատանքներուն զարկ տուող ձեռնարկին եւ յանձնախումբի անդամներուն՝ Յասմիկ Շէրպէթեանի, Լուսին Վարդանեանի եւ Ծովիկ Զէյթիւեանի աշխուժ գործունէութեան, Հայկունի Գասաբեանի, Մարո Քէչիշեանի, Վրէժ Գեղարեանի եւ Գաբրիէլ Իգանեանի շորս ամիսներուն շխուժ գործունէութեան, Կիրակի, 5 Մայիսին, աւելի քան 220 հայրենակիցներու մասնակցութեամբ ճաշ-կերոյթի ձեռնարկը մեր սպասածէն աւելի արդիւնք տուաւ, եւ ինչպէս յիշեցինք, ընդհանուր ծախսերէն վերջ կրցանք 45,000 տոլար գոյացնել եւ փոխանցել դպրոցի խնամակալութեան:



Գրական Զե

ԺԱԳ Ս. ՅԱԿՈՒԲԵԱՆ ՄԱՐԴԸ

Աւելի քան երկու ամիս առաջ, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի նախագահութեամբ, լիբանանահայութիւնը յատուկ հանդիսութեամբ մը մեծարեց սփիւռքահայ վաստակաշատ բանաստեղծ Ժագ Ս. Յակոբեանը՝ իր ծննդեան 85ամեակին և գրական գործունէութեան 65ամեակին առիթով:

«Դիտակ» ամսագիրի նախաձեռնութեամբ և լիբանանահայ մշակութային միութիւններու գործակցութեամբ տեղի ունեցած վերոնշեալ մեծարանքի հանդիսութեան ընթացքին Ժագ Ս. Յակոբեան մարդը և բանաստեղծը յաջորդաբար ներկայացուցին տոքթ. Ռոբովք Չորպաճեան և Սարգիս Կիրակոսեան:

Ստորեւ կու տանք զոյգ խօսքերը:

Կին մը կուրազդիքի վիրահատութեան ենթարկուեցաւ: Գործողութիւնը տեւեց քառորդ ժամ - ինք արդէն 3 տարիէ կը պատմէ և չի վերջանար...

Ժագ Ս. Յակոբեան 85 տարի է կ'ապրի: Կը գրէ, կ'ուսուցանէ, կ'աշխատի: Որքան ժամանակ պէտք է՝ պատմելու իր մասին:

Մարդ մը, որ կ'ապրի այս աշխարհին մէջ, բայց կը շնչէ դրախտի եթերէն: Եւ իր ներշնչումը աստղերէն աւելի հեռուէն կու գայ:

Աշխարհի մէջ է, բայց պանդուխտի պէս: Ընկերութեան հետ, այլ լուսանցքի վրայ:

Եկած չենք մեծարելու անձ մը: Ոչ ալ եկած ենք ծափահարելու տաղանդաւոր բառաշար մը, որուն տաղանդը Արարիչէն և բառերը Արարատէն ծնունդ կ'առնեն:

Եկած ենք պահ մը լուսարձակի տակ բռնելու խոնարհ և իր հետքերը ոչնչացնելու ճիգով ապրող հայագիր մշակ մը:

Եկած ենք մանաւանդ շնորհակալութիւն յայտնելու Աստուծոյ, որ մեր կեանքերը քաղցրացած են և մեր սիրտները ջերմացած՝ մեր մէջ ներկայութեամբ մարդու մը, որ իր տաղանդին փայլով մեզ չի շացնէր, սակայն իր կեանքին համար մեզ առօրեայէն և պատրաստէն կը բարձրացնէ, մեզ հաղորդութեան մէջ դնելով մէկուն հետ, որ իմաստ կու տայ մեր կեանքին և կը լիացնէ մեր հոգին:

Ուսումով տարբերու մասնագիտ է, այլ կոչումով տառերու մոլո գարձաւ:

Ասպարէզով դեղագործ, բայց Յ տասնամեակ ուսուցչութիւն ըրաւ:

Նոր սերունդին ո՛չ միայն սորվեցուց հայերէն, այլև սորվեցուց սիրել հայոց լեզուն, հայրութիւնը, - պատմութիւնը, գրականութիւնը, հերոսները, սուրբները, մեր հայրերը, մեր մայրերը, մեր տաճարները, մեր գրիչները, հայրենիքը, - հողը և հողին, քարը և քարը, Արարատը և Արցախը, շինականն ու շարականը:

Ժագ միշտ ճշմարտութեան կողքին կեցած է և չի վարանիր՝ վնասուելու գնով՝ պաշտպանելու արդարութիւնը:

Անդրանիկ Մատուկեան գինք գառնուկ կը կոչուի - բարի, հեզ, փափկաւնկալ և և իրաւամբ գառնուկի պէս անմեղ և միամիտ է՝ բառին իրաւ իմաստով: Սակայն գառնուկը առիծի պէս մռնչեց, երբ Հայկական Համայնագիտարանը Աւետարանը առասպել որակեց և Աստուծաշունչը հեթանոսի նմանցուց:

Ժագ սիրով մարդն է: «Մեղրալուսին» է մինչև «Մասիսածին», «Հայաստանի» է մինչև «Յիսուսաբոյր» ու «Յիսուսահար»:

Բնագրական սէրէն բարձրացաւ բնագրականին, յետոյ մատչելու անկէ աւելի վեր գերագանց սիրոյն - Աստուծոյ սիրոյն, որ յաւիտենականն և հանրաշահփելի և մայրն է բոլոր սէրերուն, անփոփոխ, բայց միշտ նոր երանգներով և համայնական համանուագն է տիեզերքի, քանի Աստուծո՞ւ ո՛չ միայն կը սիրէ, այլև Աստուծո՞ւ սէր է:

Ժագ կը սիրէ մարդկութիւնը - այլ անհատ մարդը, իր ընկերը, դրացին: Այս սրահէն 100 մեթր անդին, ցեխի մէջ միբճուած հայկական հիւրանականի մէկ խրճիթի ընկեր, լքուած ծերունի հիւանդին կ'այցելէր և անոր բժշկական խնամքին ծախսերը կը հոգար՝ իր ուսուցիչի թոշակէն:

Լիբանանի պատերազմին ամենատագանապալի օրերուն, ովկիանոսին միւս ափէն, իշխանական այլ սրտաբուխ նուէրով օգնութեան կը փութար Պէյրութի իր եղբայրներուն:

Մարդկային սէրը բարձրագոյն ազնուութեան վերջուցած մարդն է ան, որուն հարգատ արձագանգն է «Մարդ մը մեռաւ» բանաստեղծական հատորը, որ վահան թէքէեանի հետ իր մտերմութեան և սիրոյն վկայութիւնն է՝ մեծ բանաստեղծին վերջալուսի օրերուն: Որդիական և եղբայրական կ'ըսէ սէր և խանդաղատանք կայ հոն, հայ գրականութեան այս եզակի երեւոյթին մէջ:

Սէր՝ հանդէպ անհատներու, մարդոց, իր նմաններուն:

Առաւել սէր՝ եկեղեցիին նկատմամբ, Հայաստանեայց եկեղեցիին՝ որդիական ակնածանքով և հաւատարմութեամբ: Իր տենչը՝ տեսնել եկեղեցին հաւատքի վէմին վրայ հաստատ, մինչև երկինք սլացած այլ սրբութեան մէջ սուգուած: Ան կը գրէ. «Հայաստանեայց եկեղեցի, որ մանկութեանց ցորաբայլ հաւատքին առաջին սեմը եղար, քեզ ողջո՞յն և համբո՞յր... դու և, շարականի անտառ, սաղմոսի խնկաման, աղաչանքի՝ փոքրիկ, աղաւթի՞ ծով, վերամբարձ ձեռքերու խաղաղ, ազօրքի պաշար՝ անվերջօրէն ճարճատուն...»:

Եւ անշուշտ ժագ կը սիրէ Յիսուսը: Բանաստեղծին կոչումը որոնումն է ճշմարտին, բարիին և գեղեցիկին: Եւ անոնց սէրը և պաշտամունքը:

Մինչ ուրիշներ կը փնտռեն բարին և անոր ցուցումով կը ջերմացնեն իրենց սառած սիրտերը, հաւատացեալ բանաստեղծը գտած է միակ ու բացարձակ բարին՝ Յիսուս-բարութեան անարատ աղբիւրը:

Մինչ ուրիշներ տարիներ շարունակ իրենց սրտին տրոփը և գրիչին գարունը կը սպասեն փնտռելու գեղեցիկը և կը կարծեն գտած ըլլալ գայն՝ քարի, մարմնի կամ ծաղիկի մը մէջ - քարը կը փշրուի, մարմինը կը հլուծի և ծաղիկը կը խամրի...

Ժագ գտած է գեղեցիկը՝ կատարեալ ու գրաւիչ - Յիսուսը:

Եւ ան իր սէրը այսպէս կ'երգէ. Ի՛նչ անուշ արցունք ես դուն՝

աչքերուս, Ի՛նչպէս առաջին անգամ կ'արճան. Եւ ի՛նչ քաղցրիկ ցաւ ես սրտիս Յիսուս,

Առաջին սէրի պէս պատանական, Սիրական Յիսուս:

Անքուն սպասման դեմ՝ պատուհանի՝ Յանկացուած հիւրի ի՛նչ ողջոյն ես դուն,

Եւ ի՛նչ արեւ ես, լոյսի ի՛նչ Մայիս, ձրագիս տօնին մէջ իսկ՝ պաղպաղուն,

Սիրական Յիսուս:

Ան գտած է նաեւ ճշմարտութիւնը: Մարդիկ կը փնտռեն և չեն գտներ ճշմարտութիւնը, որ քիչ մը ամէն տեղ կը վաճառուի և միշտ կեղծ դուրս կու գայ, միշտ գոյն կը փոխէ և կողմ, ու կը դաւաճանէ յաճախ:

Ժագ գտած է զԱյն, որ ըսաւ. - Ես եմ ճշմարտութիւնը:

Եւ գարմանալի ոչինչ կայ այն իրողութեան մէջ, որ բարձրագոյն բարին, կատարեալ գեղեցիկը և բացարձակ ճշմարտութիւնը - այս երբեք - մէկ են ու կը նոյնանան մէ՛կ անձի մէջ: Յիսուսն է՝ բարի է, և՛ գեղեցիկ, և՛ ճշմարտ: Ուրիշ մը չկայ:

Ուրիշներ կ'երգեն: Ժագ կ'ապրի: Իր բանաստեղծութիւնը կենսագրութիւն է, վկայութիւն: Իր հաւատքը փորձառութիւն է՝ կեանքի վերածուած:

Ան այն սփիւռքահայն է, որ անցած է աշխարհի բոլոր ցամաքամասերէն և կայք հաստատած ամէնու մէջ, բայց տեսած չէ Հայաստանը՝ որուն սէրը իր երկրաւոր սէրերուն սիրտն է:

Ինք կուռնուկը կանչեց, մինչդեռ կուռնուկը զինք նկատեց:

Այսօր ան սպիտակ բաշով երիվար մըն է, հայ գրականութեան Արարատը նուաճած, 65 տարի հայրենիքի սիրով ճենճերած, 20 հատոր յուրօրի բերքով բեռնաւոր, իր հայեացքը աստղերէն անդին ուղղած է և սլացքը՝ երկինքին:

Ա՛ս՝ մարդը, Մասիսածին, Մեսրոպաշունչ, Յիսուսաբոյր, Հայաստոփ, Մարդկային յոյզերուն հաղորդ, Աստուածային յոյսին հետեւող - Ժագ մարդը:

Խօսիլ 25 տարի շարունակ, ամբողջական նուիրումով հայ քերթողութեան տաճարին մէջ խուկ ու աղօթք ծխած բազմաբեղուն բանաստեղծի մը մասին, պիտի նշանակէ անդադրաւորապէս վերջին 6-7 տասնամեակներու հայ քերթողութեան ապրած հոլովոյթին: Խօսիլ 20 անուկ քերթողագիրքով, բանակական ու որակական անմրցելի վաստակով սփիւռքահայ, աւելի ճիշդ՝ հայ բանաստեղծութեան անմահներուն կողքին ամենայն իրաւութեամբ իր բարձրագոյն պատուանդանը նուաճած Ժագ Ս. Յակոբեանի աւելի քան 3 հազար տպագիր էջ բանաստեղծութեանց թէկուզ հիմնական առանձնայատկութիւններուն մասին, անպաճառօրէն պիտի նշանակէ ո՛չ միայն քանի մը խօսք արտասանել մեր սփիւռքեան գոյամարտին՝ յաղթանակներուն ու պարտութիւններուն, մաքառումներուն ու տեղեկներուն, ուխտներուն ու երազներուն շուրջ, այլ և լայն բանավարքայուրը տարօրէն ինքնադրոշմ այս սփիւռքածին բանաստեղծին բազմաբանգ աշխարհին վրայ, որ միահորդուն ընթացիկ տեսարան մը չէ, մէկ հայեացքով ամփոփուող գրականարժեք ու գրանուագներ չեն, այլ միշտ ինքզինք վերանորոգող կեանք է անսահմ: Անկաշկանդ ու խորատիրուկ կեանք, որ մեծարեալ հիւր բանաստեղծին հետ եղաւ ծիածանի եօթը գոյններուն չափ ամբողջական ստեղծագործական կենսափորձ ու վերացում, լոյսի և բոլորի գլխի լիացում և արմենադրոշմ պատարագ, Արարիչին մօտենալու ամենօրեայ ճիգ և աւետարանական քաղցրածայն մէկնութիւն, անանձնական ինքնաբաշխում և վեհոյ յոյզերու հոգեզմայլ ջրվիժում:

Կեանքին մէջ, կեանքին չափ և նոյնիսկ իր սեփական կեանքին աւելի: Ահա թէ ինչու խօսիլ ժագ Ս. Յակոբեանի, ինչպէս վաւերական ռեալ բանաստեղծի մասին, այս կամ այն առումով, այս կամ այն տարրողութեամբ, կամայ թէ կամայ, անխուսափելիօրէն պիտի նշանակէ գէթ ձեռով մը դաւանանք, առնուկով զաւաղել հոգին ու ետիքները կերպարանակերպ խօսքին, որովհետեւ բանաստեղծութիւն առ բանաստեղծութիւն իր նոր եղանակներով բարձրացող խորհուրդը նկարագրելով ու վերլուծելով կարելի չէ իրաւամբ անհնչալ: Շատ աւելի շնչաւոր, բարախուն և աներեւոյթ ներկայութիւն է անկա, մեր արեւն անմայ պարզ ու անբացատրելի հոգեվիճակ, որ շարունակ ինքզինք կը յայտնաբերէ և կ'ապրի մեր մեջ՝ մարդկային ներգործութեամբ: Առաւօտեան լոյսին հետ, ճի՛շդ լոյսի պէս մեր կեանքն է մէջ բացուող երանութիւն ու հրեւանք է ան, տեսիլին նման գերեզմար տօն, ցնծեց ու լիացում, որուն գոյններուն, բոյրներուն, ձայներուն ու արձագանգներուն մէջ մեր մարդկային ակունքները կը յայտնագործենք և կը հարստանանք:

Հետեւաբար, թող հերոսի մեղի, եթէ վերլուծելով յարգելի պատճառներով, բայց ի մասնաւորի ժամանակի սահմանափակութիւնը նկատի առած՝ մենք յոբելեար բանաստեղծի մասին փորձենք բանաստեղծական մէկ-երկու խօսք արտասանել, առարկայական տուեալներու վրայ հիմնուած թէկուզ հպանցիկ վերլուծում մը կատարելու փոխարէն:

Բախտաւոր աստիճի տակ ծնած բանաստեղծ մըն է Ժագ Ս. Յակոբեան: Այդպէս եղաւ հազիւ 21 տարեկան երիտասարդին մուտքը հայ քերթողութեան դարպասէն ներս, և 1938ին, «Գաղտնի ճամբան» անուն իր երախայրիքով վահան թէքեանի «խանդաղատ ողջոյն»ին և Նիկոլ Աղբալեանի ամբողջական գնահատանքին արժանացած բնութեբանական գեղապաշտը բացաւ իր ինքնուրոյն ուղին, իր «գաղտնի», այսինքն՝ նոր ու անձանօք լուսապաշտ ճամբան, և քայլեց հաստատաբայլ: 65 տարի շարունակ, անցնելով իրեքաշարոյ և յանախ գիրար խաչածեղի էպոս տարբեր չորս աշխարհներէ, որոնց առաջինը եթէ բնութիւնը եղաւ, երկրորդը՝ բնութեան վրայ յանելու երանգ ու խորհուրդ գումարած սիրոյ տակը, երրորդը՝ Հայաստանն ու Հայրենիքը, Հայոց Պատմութիւնն ու Հայ լեզուն, չորրորդը, ամենայն իրաւունքով, այս բոլորին շունչ ու ոգի պարգեւած Արարիչը հայնդիսացաւ, որուն երկնակապոյտ քաղաքներին և ի վեր բարձրացուց իր «սրտի ու հոգիի ինկաման»ները:

Քննուշ, թարմ, թափանցիկ, բազմաբանգ և շեշտակիօրէն ինքնադրոշմ աշխարհի մը նոյնքան առանձնայատուկ մթնոլորտն է, որ քերթուած առ քերթուած ծաւելեցաւ «Գաղտնի ճամբան»էն մինչև «Մեղրալուսին» և վերջինէն մինչև «Ուրիշքաշար», պայծառացաւ փորձառութիւն առ փորձառութիւն և ամբողջացաւ գեղեցկօրէն: Ապրումներու, յոյզերու, հիացումներու և ցանկութիւններու գունագեղ հոսքը անցաւ լեզուական պերճանքի և անըպատ և նոր պատկերներու աղինքնող հոգեպաշտերէն, եղաւ գրաւիչ կենդանութիւն, ուր մարդ և բնութիւն, Արարիչ ու բանաստեղծութիւնը նոյնացան արտասովոր մտերմութեամբ մը, որ պայծառակերպուող ներկայութեան վերածուեցաւ արդարօրէն և ընթերցողը տարաւ իր տաք խորհուրդին թելադրական թեւաբախումներով: Մօտեցրուց Աստուծոյ և ստեղծեց անսահմանօրէն բարի ու բնական ա՛յն մտերմութիւնը, որ քիչ կը մնայ մեզ բնուի՝ եղաւ բնութեան կենդանացումը, մարդուն աստուածացումը, Հայաստանի սրբացումը և Աստուծոյ մարդկայնացումը:

Քննուշ, թարմ, թափանցիկ, բազմաբանգ և շեշտակիօրէն ինքնադրոշմ աշխարհի մը նոյնքան առանձնայատուկ մթնոլորտն է, որ քերթուած առ քերթուած ծաւելեցաւ «Գաղտնի ճամբան»էն մինչև «Մեղրալուսին» և վերջինէն մինչև «Ուրիշքաշար», պայծառացաւ փորձառութիւն առ փորձառութիւն և ամբողջացաւ գեղեցկօրէն: Ապրումներու, յոյզերու, հիացումներու և ցանկութիւններու գունագեղ հոսքը անցաւ լեզուական պերճանքի և անըպատ և նոր պատկերներու աղինքնող հոգեպաշտերէն, եղաւ գրաւիչ կենդանութիւն, ուր մարդ և բնութիւն, Արարիչ ու բանաստեղծութիւնը նոյնացան արտասովոր մտերմութեամբ մը, որ պայծառակերպուող ներկայութեան վերածուեցաւ արդարօրէն և ընթերցողը տարաւ իր տաք խորհուրդին թելադրական թեւաբախումներով: Մօտեցրուց Աստուծոյ և ստեղծեց անսահմանօրէն բարի ու բնական ա՛յն մտերմութիւնը, որ քիչ կը մնայ մեզ բնուի՝ եղաւ բնութեան կենդանացումը, մարդուն աստուածացումը, Հայաստանի սրբացումը և Աստուծոյ մարդկայնացումը:

Քննուշ, թարմ, թափանցիկ, բազմաբանգ և շեշտակիօրէն ինքնադրոշմ աշխարհի մը նոյնքան առանձնայատուկ մթնոլորտն է, որ քերթուած առ քերթուած ծաւելեցաւ «Գաղտնի ճամբան»էն մինչև «Մեղրալուսին» և վերջինէն մինչև «Ուրիշքաշար», պայծառացաւ փորձառութիւն առ փորձառութիւն և ամբողջացաւ գեղեցկօրէն: Ապրումներու, յոյզերու, հիացումներու և ցանկութիւններու գունագեղ հոսքը անցաւ լեզուական պերճանքի և անըպատ և նոր պատկերներու աղինքնող հոգեպաշտերէն, եղաւ գրաւիչ կենդանութիւն, ուր մարդ և բնութիւն, Արարիչ ու բանաստեղծութիւնը նոյնացան արտասովոր մտերմութեամբ մը, որ պայծառակերպուող ներկայութեան վերածուեցաւ արդարօրէն և ընթերցողը տարաւ իր տաք խորհուրդին թելադրական թեւաբախումներով: Մօտեցրուց Աստուծոյ և ստեղծեց անսահմանօրէն բարի ու բնական ա՛յն մտերմութիւնը, որ քիչ կը մնայ մեզ բնուի՝ եղաւ բնութեան կենդանացումը, մարդուն աստուածացումը, Հայաստանի սրբացումը և Աստուծոյ մարդկայնացումը:

Քննուշ, թարմ, թափանցիկ, բազմաբանգ և շեշտակիօրէն ինքնադրոշմ աշխարհի մը նոյնքան առանձնայատուկ մթնոլորտն է, որ քերթուած առ քերթուած ծաւելեցաւ «Գաղտնի ճամբան»էն մինչև «Մեղրալուսին» և վերջինէն մինչև «Ուրիշքաշար», պայծառացաւ փորձառութիւն առ փորձառութիւն և ամբողջացաւ գեղեցկօրէն: Ապրումներու, յոյզերու, հիացումներու և ցանկութիւններու գունագեղ հոսքը անցաւ լեզուական պերճանքի և անըպատ և նոր պատկերներու աղինքնող հոգեպաշտերէն, եղաւ գրաւիչ կենդանութիւն, ուր մարդ և բնութիւն, Արարիչ ու բանաստեղծութիւնը նոյնացան արտասովոր մտերմութեամբ մը, որ պայծառակերպուող ներկայութեան վերածուեցաւ արդարօրէն և ընթերցողը տարաւ իր տաք խորհուրդին թելադրական թեւաբախումներով: Մօտեցրուց Աստուծոյ և ստեղծեց անսահմանօրէն բարի ու բնական ա՛յն մտերմութիւնը, որ քիչ կը մնայ մեզ բնուի՝ եղաւ բնութեան կենդանացումը, մարդուն աստուածացումը, Հայաստանի սրբացումը և Աստուծոյ մարդկայնացումը:


սփիւռքածին մաքառումներէն բարձրացէր յաղթանակ օրհներգներուն ու պատգամներուն ոսկի կրակին, Հայոց Պատմութեան տեր-գործան մուրհորէն անցէր մայիսեան յաղթապան ճիւղաճառներուն, յեղափոխութեան ասացումներուն հետ ձե՛ր սիրտը նաեւ պայքեցուցէր «անսխալ ումբերու» ուժգնութեամբ, «Հայաստանակ»ի ազգային գինովութեան մեսրոպարոյր նեկտարով արբեցէր երջանկօրէն, ժամադրուեցէր յաղթական գալիքին հետ ու անցէր յառաջ, և զուր համոզուելով պիտի համոզուէր, որ Ժագ Ս. Յակոբեան իրաւամբ ամբողջական բանաստեղծ մըն է, Աստուծապարգեւ բազում շնորհներով օժտեալ հայ երջանակ բանաստեղծ մը, որ Սփիւռքի՝ բանաստեղծը եղաւ արդարօրէն և Սփիւռքը Հայաստանացուց մեր է՛ն ազնուական ապրումներուն մնայուն երանգներով ու թրթիռներով, կանչելով և ուխտելով:

Եւ եղաւ իրեքաշարոյ սերունդներուն բանաստեղծը: Գոյապաշտական երանութեամբ մը ապրելու հրեւանքը երգած հաւատացեալ հայ դպիրը նաեւ, որուն աւետարանական պարզութեամբ ու ջերմութեամբ բնորոշ սաղմոսները, «Վերածնունդ»էն ալիք - ալիք բացուելով՝ ամբողջական գոյն ու կատարելութիւն ստացան «Յիսուսաբոյր», «Հարսնագնաց երամ», բայց մ'անուանող «Յիսուսահար» հատորի ամբողջ երկայնքին և «Ուրիշքաշար»ի կարգ մը էջերուն:


«Բաղդր ու լուսաշող, գուարթ ու թափանցիկ, պարզ ու խորատիրուկ, երբեմն նոյնիսկ անտաշ կամ անսահմ, բայց, բոլոր պարագաներուն, անմիջական ու գրաւիչ լիիրաւ վկայութիւն մը ինչպէս, բանուած պարումի, երազի, հաւատքի և յոյսի ոսկի թելերով, ուրիշները վարակելու գիտակից ու նկատակաւաց առաքելութեամբ մը:

Այո՛, անուկի մը երգին չափ անկեղծ, ծերունիի մը խօսքին չափ խոնուն և մօր մը աղօթքին պէս հաղորդական ու սրտագրաւ են նոյնիսկ Ժագ Ս. Յակոբեանի պարագայական քերթումները, որովհետեւ «Հարապար» կոչուին անոնք թէ «Տէր - Ջորդեղին», «Հայագոյն» թէ «Եօթնօրեայ մահ», բոլորն ալ, անխտիր յստակ մեկնակետէ ճամբայ ելած և նոյնքան լուսայտակ թ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ԹԵՆԻՍ. ՈՒՒՄՊԼԵՏՆԻ ԲԱՅ ՄՐՅԱԾԱՐԸ

ԴԱԻԹ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ԴԻԻՐՈՒԹԵԱՄԲ ԱՆՑԱԻ Դ. ՀԱՆԳՐՈՒԱՆ

Լոնտոնի մէջ տեղի ունեցող Ուիմպլերնի թենիսի բաց մրցաշարին տղոց Գ. Հանգրուանին արժանութիւնահայ Դաւիթ Նալպանտեան առանց դժուարութեան անցաւ Գ. Հանգրուան, երբ անխնայ եղաւ զուգեքրիցի իր մրցակիցին՝ ձորճ Պասթըլի նկատմամբ՝ արձանագրելով 6-2, 6-2 եւ 6-2 արդիւնք մը:

Տղոց Գ. Հանգրուանի մեծագոյն զոհերէն եղաւ 5րդ դասուած ռուս Եւգենի Բաֆնիկեով, որ 7-6, 7-5 եւ 6-1 արդիւնքով պարտութիւն մը կրեց 27րդ դասուած պեյճիբաքի Ջաւիթ Մալիսէն:

Իր կարգին, բրիտանացի կրէկ Ռուսետտի դասուած 23րդ, կարեւոր յաղթանակ մը արձանագրեց, երբ 6-3, 6-4 եւ 6-2 արդիւնքով պարտութեան մատնեց 11րդ դասուած ամերիկացի էնտի Ռոտիքը:

Աղջկանց Գ. Հանգրուանի մրցումներուն, Մարի Փիրս (Ֆրանսա) 3-6, 6-4 եւ 6-1 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք Լորա Կրանվիլին (Մ. Ն.) դուրս մնաց մրցաշարէն:

Ստորեւ՝ Գ. Հանգրուանի կարիւրապոյն մրցումներուն արդիւնքները:

- ԱՂՋԻԿԱՆԵՐ
 - 9.- Էմիլի Մաորեսմո (Ֆրանսա) - 18.- Անաստասիա Միսիքին (Ռուսիա) 6-4 եւ 6-2
 - 2.- Սերենա Ռիլիքոմս (Մ. Ն.) - Էլիս Բալեյն (Պել-նիքա) 7-6 եւ 7-6
 - 3.- Ճենիֆեր Բալիթարի (Մ. Ն.) - 26.- Տաժա Պետրոնովա (Չեխիա) 6-4 եւ 6-2
 - 7.- Նյեմա Տոքիչ (Նուկուալիա) - 25.- Նաթալի Տրշի (Ֆրանսա) 7-5 եւ 6-2
 - 2.- Ջանտա Ռուպին (Մ. Ն.) - 21.- Թաթիանա Փանովա (Ռուսիա) 6-4 եւ 6-1

ՏՂԱՐԸ
Ռէյնա Արթուր (Աւստրալիա) - Թէյլըր Տէնթ (Մ. Ն.) 7-6, 7-6, 6-7 եւ 7-6

Ռիչըրտ Բրայչէք (Հոլանտա) - Փարաոտրը Սրի-շափան (Թայլենտ) 7-6, 6-4 եւ 6-2

Մարք Ֆլիվուսիս (Աւստրալիա) - Նիքոլա Քիե-ֆըր (Գերմանիա) 3-6, 6-3, 6-4 եւ 6-2

Աննո Քլեման (Ֆրանսա) - Օլիվիէ Ռոշլու (Պել-նիքա) 6-0, 7-5 եւ 6-3

22.- Նիքոլա Լափեթի (Էքուատոր) - 15.- Անտրի Փաւել (Ռումանիա) 3-6, 3-6, 7-6, 6-4 եւ 6-2

ՄՈՆՏԻԱԼ 2002

ՎԱՂԸ՝ ՊՐԱԶԻԼ - ԳԵՐՄԱՆԻԱ ՊԱՏՄԱԿԱՆ ՄՐՑՈՒՄԸ

Ճափոնի եւ Հարաւային Քորէայի մէջ տեղի ունեցող 2002ի Մոնտիալի աւարտին մնացած է միայն երկու օր, որմէ ետք ամուսնացած զուգերը կարող մրցաշարքը վերջ կը գտնէ բաւական մը զբաղեցնելէ ետք ֆուլթ-պոլասէր Հասարակութիւնը:

Հետաքրքրական պիտի ըլլայ գիտնալ, թէ ո՞վ պիտի գիտնայ, թէ ո՞վ պիտի շահի 17րդ Մոնտիալը, Պրազիլ թէ Գերմանիա:

Մոնտիալի 72 տարեկան պատմութեան մէջ, երկու խումբերը առաջին անգամ ըլլալով է, որ իրարու դէմ յանդիման կու գան, ինչ որ կը նշանակէ, թէ մրցումը Հետաքրքրական ըլլալէ աւելի պատմական ճակատում մը պիտի ըլլայ:

Եթէ պատահի, որ Պրազիլ հինգերորդ անգամ ըլլալով բարձրացնէ ռաժմակը, իր Հաստատած մրցանիշը պիտի բարելաւէ: Իսկ Գերմանիոյ յաղթանակին պարագային, անիկա պիտի Հաւասարի Պրազիլի Հաստատած մրցանիշին:

Պատմական մրցում մը ըլլալէ բացի, այս աւարտական մրցումին, Պրազիլի խմբագետ Բաֆու յարմարագոյն առիթը ունի իր կարգին պատմութիւն կերտելու, որովհետեւ ան պիտի ըլլայ առաջին մարզիկը, որ իր մասնակցութիւնը պիտի բերէ երեք Մոնտիալներու աւարտական մրցումին:

Ան առաջին անգամ ըլլալով Պրազիլի ֆուլթպոլի ազգային խումբին շապիկը կրեց 1990ին, Սպանիոյ դէմ տեղի ունեցած մրցումին:

Բազմաթիւ աստղերով շրջապատուած օրուան իտալացի իրաւաբարձ՝ Փիերլուիճի Քոլինա, բաւական դժուար պարտականութիւն մը ունի կատարելիք, որովհետեւ անոր Համար այդ օր սխալիւր աններելի է:

Կասկած չկայ սակայն, որ 42 տարեկան իտալացիին սուղը պիտի ըլլայ անսխալական, որովհետեւ ան կը մնայ աշխարհի ներկայ թիւ 1 իրաւաբարձ:

Աւարտական այս մրցումին ներկայ պիտի ըլլայ նաեւ, արժանութիւնցի Տիեկո Մարտոնա, որ Ճափոնի կառավարութեան արտօնութեամբ երէկ ժամանեց Թորթի:

Մրցումին ներկայ պիտի ըլլայ նաեւ Գերմանիոյ նախագահ Եոհանէս Ռո եւ վարչապետ Կեր-Հարտ Շրէտթը: Նշենք, թէ Ռո, նախքան Ճափոնի մէջ տեղի ունենալիք այս մրցումին ներկայ ըլլալը, Թահկուի մէջ (Հա-

րաւային Քորէա) Հարաւային Քորէա - Թուրքիա 3րդ դիրքի մրցումին ներկայ պիտի ըլլայ: Օրուան իրաւաբարձ պիտի ըլլայ թուէյթի Սաստ Մանէ: Այս մրցումը եւս աւարտական մրցումին է երկու յաղթանակ, իսկ նման տեղի պիտի ունենայ ժամը 14:00ին՝ Պէյ-րուսի ժամանակացոյցով:

ՍՏՈՐԵ՛Ն ԱՆՈՐԴ 16 ՄՈՆՏԻԱԼՆԵՐԸ ԶԱՆՈՂՆԵՐԸ

Ստորեւ կու տանք նախորդ 16 Մոնտիալները շահող խումբերը: Փակագիծին մէջ նշուած է Մոնտիալի տեղի ունեցած վայրը:

- 1930.- Ուրուկուէյ - Արժանթին 4-2 (Ուրուկուէյ)
- 1934.- Իտալիա - Չեխոսլովաքիա 2-1 (Իտալիա)
- 1938.- Իտալիա - Հունգարիա 4-1 (Ֆրանսա)
- 1950.- Ուրուկուէյ - Պրազիլ 2-1 (Պրազիլ)
- 1954.- Արեւմտեան Գերմանիա - Հունգարիա 3-2 (Չուլիցերիա)
- 1958.- Պրազիլ - Շուէտ 5-2 (Շուէտ)
- 1962.- Պրազիլ - Չեխոսլովաքիա 3-1 (Չիլի)
- 1966.- Անգլիա - Արեւմտեան Գերմանիա 4-2 (Անգլիա)
- 1970.- Պրազիլ - Իտալիա 4-1 (Մեքսիքա)
- 1974.- Արեւմտեան Գերմանիա - Հոլանտա 2-1 (Արեւմտեան Գերմանիա)
- 1978.- Արժանթին - Հոլանտա 3-1 (Արժանթին)
- 1982.- Իտալիա - Արեւմտեան Գերմանիա 3-1 (Սպանիա)
- 1986.- Արժանթին - Արեւմտեան Գերմանիա 3-2 (Մեքսիքա)
- 1990.- Արեւմտեան Գերմանիա - Արժանթին 1-0 (Իտալիա)
- 1994.- Պրազիլ - Իտալիա 0-0 Պրազիլ փե-նալթիներով 3-2 յաղթական - (Մ. Ն.)
- 1998.- Ֆրանսա - Պրազիլ 3-0 (Ֆրանսա)

«ԱԶԳԱԿ»Ի ՄՈՆՏԻԱԼԻ ՄՐՅԱՆՔ

- 1.- Ո՞վ պիտի ըլլայ Շաբաթ, 29 Յունիսին, Թահկուի մէջ (Հարաւային Քորէա) տեղի ունենալիք Հարաւային Քորէա - Թուրքիա 3րդ դիրքի մրցումին յաղթականը: (5 նիշ)
- 2.- Ի՞նչ պիտի ըլլայ մրցումին արդիւնքը: (5 նիշ)
- 3.- Մրցումին առաջին կողմ ե՞րբ պիտի նշանակուի. Ա. կիսախաղի՞ն, Բ. կիսախաղի՞ն, թե՛ երկարաձման ընթացքին: (10 նիշ)
- 4.- Մրցումը փենալթիներով պիտի աւարտի, թե՛ ոչ: (5 նիշ)
- 5.- Որեւէ խումբ կարմիր քարտ պիտի ստանա՞յ: Եթէ այո, նշել խումբին անունը միայն: (5 նիշ)

Անուն
Մականուն

Սոյն մրցանքին կտրօնները «Ազգակ»ի խմբագրատուն պետք է հասած ըլլան առաւելագոյնը՝ մինչեւ Շաբաթ, 29 Յունիս, կէսօրէ ետք ժամը 13:00ին:

Առաւելագոյն նիշ ապահովող մասնակիցը կ'ըլլայ յաղթականը: Հաւասար նիշերու պարագային, տեղի կ'ունենայ վիճակաձգութիւն:

Մրցանքին իրենց մասնակցութիւնը չեն կրնար բերել «Ազգակ»ի պաշտօնէաները:

- 1.- ԱՃՃԵԱՆ ճամբորդական հաստատութեան կողմէ տրամադրուած Դամասկոս - Սայիտնայա - Մաալույա 2 հոգինոց երթուղարձի տոմս մը:
- 2.- JEPА վաճառատան կողմէ տրամադրուած՝ տղամարդու շապիկ մը:

ՃԱՏՐԱԿ

1

ՃԵՐՄԱԿՆԵՐԸ ԿԸ ՄԱՂՍ ԵՒ ՍԱԸ 2 ԾԱՐԺՈՒՄՈՎ

ԶԱԾԻՍՏԱՆՈՎ ՓՈԼԿԱՐ Ժ. (2002)

2

ՃԵՐՄԱԿՆԵՐԸ ԿԸ ՄԱՂՍ ԵՒ ՍԱԸ 2 ԾԱՐԺՈՒՄՈՎ

ՊՐՈՒՍՔԵՐՆ Ժ. ԱԼՖՐԵՏ Ն. (2002)

3

ՃԵՐՄԱԿՆԵՐԸ ԿԸ ՄԱՂՍ ԵՒ ՍԱԸ 2 ԾԱՐԺՈՒՄՈՎ

ՓԵՐՐՈՎ Ս. ԱՐՈՇԱՅՏՂԼ. (2002)

4

ՃԵՐՄԱԿՆԵՐԸ ԿԸ ՄԱՂՍ ԵՒ ՍԱԸ 2 ԾԱՐԺՈՒՄՈՎ

ՀԱՆՆՈՒ ԶԵՐՈՒՆԸՆ (2002)

«ԱԶԳԱԿ»Ի ՄՈՆՏԻԱԼԻ ԿԻՍԱԿԱՐՏԱԿԱՆԻ ՄՐՅԱՆՔՆԵՐՈՒՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Ճափոնի եւ Հարաւային Քորէայի մէջ տեղի ունեցող 2002ի Մոնտիալին առիթով, «Ազգակ» կազմակերպեց շատ մը մրցանքներ, որոնց մէջ մասին արդիւնքները իրապարակաւ եզրան արդէն նախապէս:

Կիսաաւարտականի երկու մրցումներուն կազմակերպուեցան տարբեր մրցանքներ, որոնց արդիւնքները կու տանք այսօրուան մեր թիւով:

Պրազիլ - Թուրքիա մրցանքին իրենց մասնակցութիւնը բերած են 10 մարկաւերներ, 15 կտրօններով:

Առաւելագոյն նիշը ապահոված է ՔԱՐՈԼ ՄԱՐԿԱՐՈՍԵԱՆ, որ շորս հարցումներէն երեքին տուած է ճշգրիտ պատասխաններ:

ՔԱՐՈԼ ՄԱՐԿԱՐՈՍԵԱՆԷՆ կը խնդրուի ԱՆՉԱՄԲ ներկայանալ «Ազգակ»ի խմբագրատուն, ստանալու համար իր նուէրը՝ JEPА վաճառատան կողմէ տրամադրուած տղամարդու շապիկ մը:

ԿԻՍԱԿԱՐՏԱԿԱՆԻ երկրորդ մրցանքին՝ Գերմանիա - Հարաւային Քորէա, մասնակցութիւնը բերած է 4 հոգի, 6 կտրօններով: Առաւելագոյն նիշը ապահոված է ՀՐԱՅՐ ՔԷՇԻՇԵԱՆ, որ հինգ հարցումներուն ալ տուած է ճիշդ պատասխաններ, ապահովելով առաւելագոյն 30 նիշերը:

ՀՐԱՅՐ ՔԷՇԻՇԵԱՆԷՆ կը խնդրուի ԱՆՉԱՄԲ ներկայանալ «Ազգակ»ի խմբագրատուն ստանալու համար իր նուէրը՝ VANLIAN LIGHTING հաստատութեան կողմէ տրամադրուած սեղանի լուսամոդի մը:

igloo Ets. Avo Soulahian

Family 34,0L Combo

1 34,0L

2 3,8L

3 1,0L

6

Exclusive Agent Ets.Avo Soulahian Tel: 01 - 691526

«ԱԶԳԱԿ»Ի ՄՈՆՏԻԱԼԻ ՄՐՅԱՆՔ

- 1.- Ո՞վ պիտի ըլլայ Կիրակի, 30 Յունիսին, Եոքոհամայի մէջ (Ճափոն) տեղի ունենալիք Գերմանիա - Պրազիլ աւարտական մրցումին յաղթականը: (5 նիշ)
- 2.- Ի՞նչ պիտի ըլլայ մրցումին արդիւնքը: (5 նիշ)
- 3.- Որո՞նք (կամ ո՞վ) պիտի ըլլան կու նշանակողները: (10 նիշ)
- 4.- Ո՞վ պիտի հանդիսանայ Մոնտիալին կողմորդը (կամ՝ կողմորդները): (10 նիշ)
- 5.- Ո՞վ պիտի նշանակէ 2002ի Մոնտիալին վերջին կողմը: (10 նիշ)

Անուն

Մականուն

Սոյն մրցանքին կտրօնները «Ազգակ»ի խմբագրատուն պետք է հասած ըլլան առաւելագոյնը՝ մինչեւ Շաբաթ, 29 Յունիս, կէսօրէ ետք ժամը 13:00ին:

Առաւելագոյն նիշ ապահովող մասնակիցը կ'ըլլայ յաղթականը: Հաւասար նիշերու պարագային, տեղի կ'ունենայ վիճակաձգութիւն:

Սոյն մրցանքին չեն կրնար մասնակցիլ «Ազգակ»ի պաշտօնէաները:

- 3աղթականը կը շահի.
- 1.- ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ հաստատութեան կողմէ տրամադրուած Կամպոմատիկ վաճառանիշով մեքենայ մը:
- 2.- OPTIMAX հաստատութեան կողմէ տրամադրուած յայտնի վաճառանիշով տղամարդու ակնոց մը:
- 3.- ԱՐԱ ԲԵԷԷԵԱՆ հաստատութեան կողմէ տրամադրուած տարեղարձի յատուկ վիտէօ - երիկ մը:

Խնդիրներուն լուծումը տեսնել՝ 10րդ էջ

Այս սիւնակը պատրաստեց՝ Էլի Հուլիշեան

